

Վ. ԶԱՊՈՒՐՈՎԻ

ԴԱՏԱԿԱՆ ԿՈՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ  
ՈԺԱՆԴԱԿ ԶԵՊՆԱՐԿ

ՀԱՅՀ ԳԵՂԱԼԻԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ

1938

347  
9-94

1 MAR 2010

Վ. ԶԱՊՈՒՐՈՎԻ

347  
9-94 ս6

ԴԱՏԱԿԱՆ ԿՈՍԱՐԱԺՈՒՆԵ Ը  
ՀԱՄԱՐ  
ՈԺՈՆԴԱԿ ԶԵԽՆԱՐԿ



3298  
38

ՀԵԽԱ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱԶՈՒԹՅԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1938

«Դատական կատարածուների համար ոժանդակ ձեռնարկ» բրոյուրը հանրամատչելի ձեռվ շարադրում ե այն հիմնական կանոնները, վորոնք կանոնավորում են դատական վճիռները կատարելու պրոցես և նրանց հավասարեցրած՝ կատարելու իմաստով՝ մյուս մարմինների վորոշումները:

Հիմնարկանում բրոյուրը նախանշված ե դատական կատարածուների համար: Սակայն այն կարող են ոգտագործել և ժողովրդական դատավորները, վորոնք իրագործում են դատական կատարածուների աշխատանքի հսկողությունը, դատական կատարածուների հասարակական ակտիվը և ձեռնարկությունների հաշվարկային մասերի հաշվապահները:

Բրոյուրը կարող է նույնակես վորպես ձեռնարկ ծառայել էրավաբանական դպրոցների ու կուրսերի համար:

### ԿՐՑԱՏ ԽՈՍՔԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- ԳԿՀ — Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողով:
- ՃԿՄ — Ժողկոմիսորհ:
- ԿԳԿ — Կենացործկոմ:
- Քաղ. Դ. — Քաղաքացիական Դատավարության Որենսություն:
- Որ. Ժ. — Որենքների Ժողովածու ԽՍՀՄ («ՀՅ»)
- Որ. Ժ. — Որենքների Ժողովածու ՌԽՖՍՀ («ՀԿ»)
- Քր. Դ. — Քրեական Դատավարության Որենսդիրք:

### ՆԱԽԱԲԱՆ

Դատական վճիռների կատարման կազմակերպումն և այդ գործի դրվածքը արդարադատության մարմինների աշխատանքի ամենահետամնաց ու չկարգավորված բնագավառն ե հանդիսանում: Սատալինյան Սահմանադրությունը, վորը ահագին բարձրության վրա յէ դրել դատական մարմինների դերն ու նշանակությունը, դատական սիստեմի բոլոր ողակների՝ նույն թվում և դատական կատարածուների՝ աշխատանքին բարձր պահանջներ և առաջադրում:

Այդ դերին արժանի լինելու համար դատական մարմինները պետք ե արմատապես վերակառուցեն և բարելավեն վճիռների կատարման աշխատանքը: Հակառակ զեպքում դատական-կատարողական ապարատի վատ աշխատանքը կվիմեցնի դատարանի հեղինակավորությունը և մի շարք զեպքերում զերոյի կհավասարեցնի նրա աշխատանքը:

Դատական կատարածուների աշխատանքի վորակի բարձրացման գործը դատական զեկավար մարմիններից պահանջում ե լարված աշխատանք վոչ միայն կազմակերպական ու նյութական-կենցաղային միջոցառումների, այլ զլիսավորապես կադրերի ընտրության ու նրանց պատրաստելու գծով:

Վոչ պակաս լարված աշխատանք կպահանջվի նաև դատական կատարածուներից:

Վճիռների կատարումը մի բարդ իրավական պրոցես ե, իորը դատական կատարածվից բավական լայն իրավական դիտելիքներ ե: պահանջում, իսկ առանց այդ գիտելիքների դատական կատարածուն ճիշտ աշխատել անկարող ե: Կուլտուրական, իրավաբանորեն ու քաղաքականապես զրագետ դատական աշխատող լինելու համար դատական կատարածուն պարտավոր ե համառորեն

աշխատել՝ այդ գիտելիքները ձեռք բերելու և իր վորակալորումը  
բարձրացնելու նպատակով:

Այս գրքույկի նպատակն ել հենց այն է, վոր ցույց տա  
գատական կատարածվին հնարավոր ոժանդակությունն՝ դատա-  
կան վճիռների կատարման պրոցեսի բնագավառում տարրակա-  
նորեն անհամաշտ գիտելիքներ ձեռք բերելու համար: Գրքույ-  
կում շարադրվում ե գատական-կատարողական ապարատի կա-  
ռուցվածքը, հիմնական կատարողական գործողությունների կա-  
տարման կարգը, այլև դատական կատարածվի աշխատանքի մե-  
թոդները՝ ամենից կարևոր կատեգորիաների գործեր կատարելու  
բնագավառում: Դատական կատարածվի գործալարության հատ-  
վածը, վոր հսկայական նշանակություն ունի կատարողական  
փաստաթղթերի ու կատարման պրոցեսում անցնող դրամական  
գումարների հաշվառման տեսակետից, ՌԽՖՍՀ Արդյողկոմատի  
և Գերագույն դատարանի հրահանգը դատական կատարածու-  
ներին գանձելու համար անցնող կատարողական փաստաթղթերի  
հաշվառման մասին,— սույն գրքույկում տված ե բառացիորեն՝  
բնագրից առած:

#### Վ. ԶԱՊՈՒՐՅԿԻ

ՎՃԻՌԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:  
ԱՇԽԱՏԱՎԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դատական վճիռ կայացնելու փաստով գեռ չի վերջանում  
գատական մարմինների գործունեյությունը քաղաքացիական գոր-  
ծերի լուծման հարցով:

Վորքան ել վոր ինքնին լավ ու ճիշտ լինի դատարանի կա-  
յացրած վճիռը, սակայն նրա վերջնական նովատակը կատարված  
«ի լինի, յեթե դատարանի վճիռը մնա միայն թղթի վրա և չկեն-  
սագործվի»:

Այդ իսկ պատճառով այն գեպքում, յերբ դատակի բար (օտաւ-  
ուր—պատասխանորդ) հրաժարվում է յենթարկվել դատական  
վճռի ուժին կամ խուսափում ե հոժարակամ կատարելուց, որեն-  
քով վճռի ստիպողական կատարման կարգ է սահմանված՝ հակա-  
ռակ դատակի կամքին ու ցանկության:

Այն ստիպողական միջոցառումների ամբողջությունը, վո-  
րոնք որենքով թույլատրվում են և դատական մարմինների կող-  
մից կիրառվում են կյանքում՝ դատարանի կողմից քաղաքացիա-  
կան գործով կայացրած վճիռը կենսագործելու համար, կազմում  
են դատական վճիռների գործադրումը:

Կազմելով քաղաքացիական պրոցեսի յեղափակիչ մասը, դա-  
տական վճիռների կատարումը բացառապես լուրջ նշանակություն  
ունի վոչ միայն առանձին պահանջատերի, վորը շահագրգուված ե  
վճռված գույքն արագ ստանալու հարցում, այլև պեսության  
շահերի տեսակետից: Դատարանի ամեն մի վճիռը քաղաքացիա-  
կան գործով՝ քաղաքական մեծ կարևորություն ունեցող փաստա-  
թուղթ և, վորով խորհրդային դատարանը դաստիարակում է և  
մեր Միության աշխատավորական մասսաների մեջ ամրացնում է  
խորհրդային որենքի անսասանության գիտակցությունը, սովո-  
րեցնում է մարդկանց պահպանել սոցիալիստական կարգապահու-

թյունը, հարգանքով վերաբերվել աշխատանքին ու սոցիալիստական համակեցության կանոններին:

Կենսագործելով դատական վճռը, դատական կատարածուն սոցիալիստական որինականության ու սոցիալիստական համակեցության սկզբունքների անցկացնողն ե Հանդիսանում: Դատական վճիռների կատարման վատ դրվածքը և նամանավանդ վճռի կատարման ձգձգումը մասսաների մեջ նույնացնում են դատարանի Հեղինակությունը և կարող են զերոյի հավասարեցնել դատարանի աշխատանքը սոցիալիստական որինականությունն ամրապնդելու և աշխատավորության իրավունքները պաշտպանելու բնագավառում: Մինչև այժմ դատական-կատարողական ապարատի աշխատանքն անրավարար է Հանդիսանում, և խորհրդային վերահսկողության Հանձնաժողովի 1936 թվի ապրիլի 22-ի վորոշման այն ցուցումը, վոր դատական վճիռների կատարման աշխատանքը ներկայացնում ե «դատական աշխատանքի ծայրահեղությած մի բնագավառ»՝ ներկայումս ել պահպանում ե իր ուժը՝ ասլած ե դատական-դատախազական՝ ըստ քաղաքացիական գործերի աշխատողների ։ Համամիտութենական խորհրդակցության վորոշման մեջ:

Խորհրդակցությունը նշել ե, վոր դատական կատարածուների աշխատանքի մեջ լուրջ թերություններ կան.

1) Վճիռների կատարման հետ կապված անհանդուրժելի ձգձգում, վճիռների, վորոնք ամիսներով, յերեմն և տարիներով, ի կատար չեն ածվում, ըստ վորում նկատվում ե անպատճախափությունը վերաբերմունք դեպի կոչմերի՝ հաճախ առանց դատախանի մնացող՝ հարցադաշտումները.

2) Ինքնահոսություն վճիռների կատարման աշխատանքում, վորի հետևանքով զանձումների հերթականությունը սահմանվում է վոչ թե գործի լրջության աստիճանին, այլ կատարման հեշտությանը նայելով.

3) Սոցիալիստական որինականության խախտում դատական կատարածուների կողմից՝ խախտում այն կանոնների, վոր սահմանվում էն գույքի վերդրման ու գնահատման նկատմամբ, գույքն աճուրդով վաճառելու կարգի որևէքով նախատեսված պահանջների անտեսում և այլն.

4) դատական կատարածուների մեծամասնությունը շախ-

ցակայում է կատարողական թերթերի ընթացքի հաշվառումը և հաճախ չի լինում վոչ մի հետք այն մասին, թե յերբ է անցել կատարողական թերթը դատական կատարածվին և յերբ են կատարվել այս կամ այն կատարողական գործողությունները.

5) առավելապես անբավարար է դրամական հաշվետվության և դրամական գումարների ու փաստաթղթերի պահպանման գործի գրվածքը. Հակառակ հրահանդիք՝ պարտապանից գանձված գումարները դատական կատարածուներն ընդունում են առձեռն և չեն հանձնում ի պահ վարկային հիմնարկություններին՝ սահմանված ժամկետում. դրամական գորքերը տարվում են անփութորեն, պահվում են սեղանների բաց արկղներում, դարակների վրա. Դրամական գործառնությունները ձեւակերպվում են ծայրահեղութեն անփույթ կերպով, վորի հետևանքով տեղի յեն ունենում դրամական գեղձարարություններ, յուրացումներ ու վատնումներ առանձին դատական կատարածուների կողմէց.

6) դատական կատարածուների մեծամասնությունը շարունակում է ձեւականորեն վերաբերվել դատական վճիռների կատարման գործին, նրանք ակտիվ միջոցներ ձեռք չեն առնում պարտապանի գտնվելու վայրը պարզելու, նրա գույքը հետախուզելու համար, առավելապես ալիմենտային գործերով, չեն հսկում իրենց կողմից ձեռնարկություններին գանձման հաճար ուղարկված կատարողական թերթերի կատարմանը. գեռ ավելին՝ իրենց կատարողական թերթերի կատարման մասին իրազեկ չեն լինում, իսկ ժողովրդական դատավորներն իրենց դատական կատարածուներին նրանց աշխատանքում աջակցություն ցույց չեն տալիս.

7) Հասարակայնությունը դատական կատարածուների աշխատանքի մեջ համարյա չի ներգրավված, վոչվոր չի հետաքրքրվում նշանակված սոցհամատեղիներով ու դատական ակտիվի կազմով, դատարաններն ու դատական կատարածուները խոչը ձեռնարկություններում չեն կազմակերպում կոնտրոլ (վերահսկողության) պոստեր— դատական կատարածուներին ոգնելու՝ այդ ձեռնարկություններն ուղարկված կատարողական թերթերով գանձումներն ստուգելու աշխատանքում:

Դատական կատարածուների աշխատանքի թերությունների չենց այս համառոտ ցուցակը ցույց և տալիս, թե ինչպես չպետք է աշխատի դատական կատարածուն և ինչ պետք ե անի նա իր

աշխատանքն արմատորեն վերակառուցելու ուղղությամբ։ Անհրաժեշտ է միանդամից ընդություն մի կողմ չպրտել Հին՝ մինչ Հեղափոխական ժամանակից մեացած այն կարծիքը, վոր դատական կատարածուն միայն պահանջատիրոջ կամքի կատարողն է, վորը պարտավոր և գործել այն չափով, ինչ չափով նրան խնդրում է՝ ավելի ճիշտը՝ դրդում-հրում և պահանջատերը։ Մեր պայմաններում դատական կատարածուն պետական դատական մարմին և, վորի պարտավորությունն է լինել կենդանի, ձեռներեց՝ դատական վճիռը կենսագործելու ասպարեզում։ Քաղ. դատ. որ. 5-րդ հոդ. պահանջը, վորը պարտավորում է դատական որդանները դեմով աշխատավորներին ցույց տալ «ակտիվ աջակցություն նրանց երավունքների և որինական շահերի պաշտպանությանը», նույնպիսի ղեկավար սկզբունք և հանդիսանում խորհրդային դատական կատարածի աշխատանքում, ինչպես և խորհրդային դատավորի աշխատանքում։

Վճիռների կատարման գործում թղթի, բյուրոկրատիկ-ձեռների կամ մեթոդները վերացնելու նպատակով անհրաժեշտ է լայնորեն ներդրավել հասարակայնությունը, նաև անավանդ այն կատարողական թերթերի կատարումն ստուգելու նկատմամբ, վորոնք ուղղված են յեղել հիմնարկություններն ու կազմակերպությունները՝ գանձումը պարտապանի աշխատավարձի վրա ուղղելու համար, նույնպես և վճարումներից խուսափող պարտապանին հայտարելու համար։ Առավելապես կարեոր է հասարակայնության ակտիվի ներդրավումն ալիմենտային ու հաշմության գործերի կատարման վերաբերմամբ։ Դատական կատարածուներին հարատե, ոգնություն ցույց տալու համար պետք է, համաձայնեցնելով քարգործ, տեղկոմի հետ, խոչը հիմնարկություններում ու կազմակերպություններում, կոլտնտեսություններում և այլն կազմակերպել դատական կատարածուներին ուժանդակող խմբակներ, հսկողության պոստեր՝ ներդրավելով այդ հիմնարկությունների ու կազմակերպությունների կանացի ակտիվիք։

Պետք է վճռականորեն վերջ տալ անսլանային և ինքնահոս աշխատանքին։ Աշխատանքի տերն ու տնօրինողը դատակու և դործերի թղթի հեղեղի պոչից քարշ չգալու համար ամեն մի դատական կատարածու պարտավոր և ունենալ ամսական կամ կվար-

տալային (յեռամսյա) պլան՝ յելնելով աշխատանքի պայմաններից։ Այդ պլանում նախորոք պետք է նշյած լինեն հաճախորդների ընդունելության որերը, շրջան՝ վորոշ գյուղխորհուրդները նրա գնալու որերը, հետազոտելու որերը (ատուգելու ձեռնարկություններում ու հիմնարկություններում գտնվող վճիռների կատարման գործի գրությունը և այլն)։ Դատական կատարածուների թե ընդունելության և թե ըրջան գնալու որերի մասին շրջանի բնակչությանը պետք է լայնորեն հայտարարվի, վորակեսինա, նվազագույն չափով կորցնելով իր ժամանակն ու ուժերը, կարողանա անձամբ զիմեկ դատական կատարածուների միջնորդությունով, հարցումով և այլն։

Դատական կատարածուներն իրենց աշխատանքում պետք է ձգտեն լայնորեն կիրառել սոցմրցման ու հարվածայնության մեթոդները՝ ինչպես անհատականորեն իրենց վրա վերցրած պարտավորությունների կարգով, նույնպես և առավելապես հարեւն կատարածուների հետ սոցմրցման յերկողմանի պայմանագրերի կարգով։ Սոցմրցման սրյեկտներ պետք է ընտրվեն աշխատանքի հիմնական բնագավառները, ինչպես՝ կատարման ժամկետները, իրապես կատարված բանագանձումների քանակը, կողմերի հարցավնդումներին չուտափույթ պատասխանելու շտապողականությունը, հսկողությունը հիմնարկություններում ու ձեռնարկություններում վճիռների կատարման գործի և այլն։

Աշխատանքի վորակի բարձրացման պայքարում ահազին նշանակություն ունի դատական կատարածվի քաղաքական պատրաստականությունն ու իրավական վորակավորումը։ Զայտոք և թագցնել, վոր դատական կատարածուները քաղաքականապես թույլ են պատրաստված, իսկ իրավական տեսակետից հաճախ բոլորվին անդրագետ են։ ՈՒԽԾ Արդիոկլիոմատում դատական կատարածուների վերապատրաստման համար բացվում են հատուկ դասընթացներ, իրավական դպրոցներին կից կազմակերպում են խմբակներ դատական կատարածուներ պատրաստելու նպատակով, սակայն միանդամայն հասկանալի պատճառներով այդ միջոցառումները բոլոր դատական կատարածուներին միաժամանակ ներդրավել չեն կարող։ Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր դատական կատարածու անձամբ ինքը պետք է

աշխատի բարձրացնել իր վորակավորումը և այդպիսով գառնալ  
իսկապես կուտարական, իրավաբանորեն գրագետ, քաղաքակա-  
նապես դաստիարակված, իր գործը գիտցող դատական աշխատող:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐԸ

ԻՒՀԱՀ դատակավության կանոնադրության համաձայն  
դատական մարմինների սխտեմում գոյություն ունի հատուկ  
մարմին-դատական կատարածուներ, վորոնց վրա դրված և դա-  
տական վճիռների կատարման պարտականությունը: Դատական  
կատարածուները գտնվում են ժողովրդական դատարաններին  
առընթեր, նրանք նշանակվում և արձակվում են այդ պաշտոնից  
յերկրային (մարզային) դատարանի նախադահի հրամանով,  
իսկ ավտոնոմ հանրապետություններում ու մարզերում— հան-  
րապետության համապատասխան Գերագույն դատարանի կամ  
ավտոնոմ մարզի մարզային դատարանի նախադահի կողմէց:  
Որենքով դատական կատարածվի պաշտոնում՝ կարող են նշանակվել  
ԻՍՀԱՀ յուրաքանչյուր քաղաքացի, վորը ընտրական իրավունք-  
ներից դատարանով զրկված չեն, յեթե մենական ժամանակ նա մի  
տարի ծառայել են վորեւ պաշտոնով խորհրդային արդարադա-  
տության մարմիններում կամ յեթե նա կարողանա քննություն-  
տալ ԽՍՀՄ Արդժողովմատի կողմից սահմանված ծրագրի հա-  
մաձայն: Գտնվելով ժողովրդական դատարաններին առընթեր՝  
դատական կատարածուները ինչպես իրենց պաշտոնական պար-  
տականությունների, նույնպես և իրենց ոպերատիվ գործունե-  
յության վերաբերմամբ գտնվում են այն ժողովրդական դատա-  
վորի անմիջական հսկողության, ղեկավարության տակ, վորը  
կրում են իր շրջանի դատական կատարածվի գործունեյության  
պատասխանատվությունը:

Դատական կատարածուն միանձնյա դատական մարմին և,  
վորն իր շրջանի սահմաններում պարտավոր և կատարել դատա-  
կան վճիռներով վորոշված բոլոր բոնադանձումները: Խորհրդա-  
յին Միության մի քանի յերկրներում ու մարզերում մինչև այժմ  
գոյություն ունեցող՝ կոլեկտիվ կազմակերպության տիպի դա-  
տական-կատարողական ապարատ կառուցելու պրակտիկան, դա-  
տական կատարածուների բյուրոյի նման, կամ դատական կա-

տարածուների դասավորումն ըստ բոնադանձումների կատեգո-  
րիաների, որինակ՝ դատական կատարածու բնակարանային գոր-  
ծերով, դատական կատարածու ալիմենտային գործերով և այլն—  
այդ պրակտիկան սխալ և վոչ համապատասխան որևէքին:

ԽՍՀՄ ԺԿԸ 1934 թ. սեպտեմբերի 11-ի վորոշման համաձայն  
(«Որ. ժող.» 1934 թ. № 48, Հոդ. 376) դատական վճիռների  
կատարումն իրագործվում և նմանապես վարկային հիմնարկու-  
թյունների միջոցով: Յեթե յերկու կողմերը— պահանջատերն ու  
պարտապանը— պատկանում են պետական, հասարակական կամ  
կոռպերատիվ կազմակերպությունների շարքին (բացի կուսնոտե-  
սություններից), այդ գեպքում կատարողական փաստաթղթե-  
րով բոնադանձումները կատարվում են բանկային փոխանցման  
կարգով, այն և՝ պարտքի գումարը պարտապանի հաշվարկային  
Հաշվից պահանջատիրոջ հաշվարկային հաշվին փոխանցելով:  
Սակայն այդ Փունկցիայի կատարումը հիմք չի տալիս բանկը  
դատական վճիռների կատարման մարմինների թվում գասելու:  
Բանկը սոցիալիստական տնտեսության վարկային-հաշվարկային  
մարմին և, և նրա գործունեյությունը, այդ թվում նաև վճիռ-  
ների կատարումը հանրայնացված սեկտորի սահմաններում, վո-  
րոշվում և բանկային կանոններով, և վոչ թե Քաղաքացիական  
դատավարական որենսգրքով:

Գյուղական վայրերում վճիռների կատարումն իրագործվում  
է գյուղական խորհրդների միջոցով: Սակայն ԽՍՀՄ ԿԳԿ և  
ԺԿԸ 1937 թ. մարտի 21-ի վորոշման կապակցությամբ, վորի հա-  
մաձայն գյուղական խորհրդներն ազատված են դրամական-  
հարկերի, ապահովագրական մրւծումների և բնավճարների (հա-  
տորալիա պատահած հաշվարկան գործունեյություններից)  
հաշվարկման ու զանձման պարզությունից: Այդ հարցը, ի հարկե, կարող է լուծվել  
միայն որենսգրքական կարգով:

Խօն ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՆ Ի ԿԱՏԱՐ ԱՆՎՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ  
ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՄԻՋՊՑՈՎ

Թեև դատական կատարածուների կողմից ստիպողական  
բոնադանձումների նկատմամբ սովորաբար կիրառվող միջոցա-

առումները դատական վճիռների կատարում են անվանվում, սա-  
կայն վճիռների կատարման որևէ գործ սահմանված կարգը կի-  
րառվում է վոչ միայն դատական վճիռների վերաբերմամբ:  
Համաձայն Քաղ. Դ. Ո. 225 հոդ.\*\*) ստիպողական կատարման  
յինթակա յեն.—

ա) դատարանի վճիռներ քաղաքացիական գործերով, բ) կա-  
տարազական մակագրեր, մակագրեր մուշակների վրա բողո-  
քարկման մասին և մակագրեր չեկերի վրա՝ չլմարելը հաստատե-  
լու մասին, վոր կատարում են նոտարական գրասենյակներն ու  
նոտարական գործողություններ կատարող մարմինները. գ) դա-  
տարանների վորոշումներ՝ քաղաքացիական ու քրեական գործե-  
րով տուգանք դնելու մասին. դ) Քր. Դ. Ո. 121, 121 և 459\*\*) հոդ.  
Հոդ. հիման վրա կայացրած՝ դատարանների վորոշում-  
ներ. ե) Պետարքիտրաժի մարմինների վճիռներ այն կարգով,  
վոր նախատեսված են նրանց կանոնադրությամբ, և միջնորդ դա-  
տարանների վճիռներ. զ) դատարանում կնքված հաշտեցման  
գործարքներ:

Բացի այդ դատական կատարածուների միջոցով ստիպողա-  
կան կատարման կարգը կիրառվում է նույնպես.—

ա) վարչական մարմինների կողմից նշանակված տուգանք-  
ները մարելու համար, գույքերը հանելու (ազգային) մասին կա-  
րգարած՝ դատարանների վորոշումներ (ԽՍՀՄ ԿԳԽ և ԺԿԽ  
1937 թ. ապրիլի 11-ի վորոշումը և ԽՍՀՄ Արդիողիոմատի  
1937 թ. № 52 հրամանը). բ) Գերատեսչական արքիտրաժի այն  
մարմինների վճիռները, Պորոնց ԽՍՀՄ ԺԿԽ-ի համապատասխան  
վորոշումներով իրավունք են վերապահված իրենց վճիռներն ստի-  
պողական կարգով կատարելու. գ) պրոֆմիության մարմինների  
վորոշումներ՝ ԳԿԽ, հաշտարար կամերաների (ատյան) և միջ-  
նորդ դատարանների վճիռների հիման վրա կայացրած. դ) ար-  
տադրական-ընկերական, գյուղական հասարակական դատարան-

\*) Գրքույկում հողվածները բերված են ՌԽՖՍՀ որենսգրքից:  
Մանոթության մեջ, այսուղ և հետագայում բերվում են Հայ-  
կական ԽՍՀ որենսգրքերի համապատասխան հողվածները: Հոդ.  
255, Քաղ. Դ. Որ.:

\*\*) 120, 121 և 404 հոդվածները Քր. Դատ. Որ.:

ների և ժակտերին ու տնային արեստներին կլց ընկերական դա-  
տարանների վորոշումներ. ե) Պետքանկի կատարողական մա-  
կագրեր ունեցող հաշիվ-Փակտուրաներ կամ վճարման սպահան-  
ջագրեր և զ) ԶԱԳՍ-ի մարմիններում կնքված համաձայնագրեր՝  
յիշեիսանների և անաշխատունակ ամուսնու ապրուստի միջոցների  
մասին:

Ինչ վերաբերում է ոտարերկրյա դատարանների վորոշում-  
ներին, վերջինների կատարման կարգը սահմանվում է ԽՍՀՄ  
կառավարության և համապատասխան պետությունների միջև  
կնքված հատուկ համաձայնագրերով: Համաձայն ԽՍՀՄ ու Մոն-  
ղորական ժողովրդական հանրապետության միջև 1931 թ. ապ-  
րիլի 16-ին կնքված կոնվենցիայի, ԽՍՀՄ տերիտորիայում Մոն-  
ղորական ժողովրդական հանրապետության դատարանների վոչ  
բոլոր վորոշումներն են կատարման յենթակա, այլ միայն հե-  
տեւյալ կատեղորիփանների գործերը.

ա) ծնողների, յիշեիսանների ու ամուսինների համար ապ-  
րուստի միջոցներ պահանջելու մասին (ալիմենտային գործեր).

բ) այն գործերը, վոր կարգված են պետական հիմնարկու-  
թյուններին, ձեռնարկություններին և հասարակական կազմակեր-  
պություններին հասցրած վնասների հետ (վատնում, գողություն,  
յուրացում և այլն).

գ) աշխատանքային հարաբերություններին վերաբերյալ  
գործերը.

դ) այն գործերը, վորոնք վերաբերում են ԽՍՀՄ և Մոնղո-  
լական ժողովրդական հանրապետության պետական բանկերին,  
նույնպես և պետական, կոռպերատիվ և հասարակական հիմնար-  
կություններին ունեցած պարտքերի բոնագանձմանը:

Մոնղոլական ժողովրդական հանրապետության դատարանն-  
երի վճիռների կատարման հարցի մյուս առանձնահատկությունն  
այն է, վոր Մոնղոլական ժողովրդական հանրապետության դա-  
տարանների կատարողական փաստաթղթերը ներկայացվում են  
դատավական կատարածվին վոչ թե անմիջականորեն, այլ համա-  
պատասխան միութենական կամ ավտոնոմ հանրապետության  
Արդյողկոմատի միջոցով, վերջինս, գտնելով, վոր վճիռը, ԽՍՀՄ  
ու Մոնղոլական ժողովրդական հանրապետության միջև գոյու-  
թյուն ունեցող կոնվենցիայի համապատասխան, յենթակա յե-

կատարման այդ միութենական կամ ավտոնոմ հանրապետության սահմաններում, գրադրությունն ուղղում է վճռի կատարման վայրի դատարանին:

Ստանալով հիշյալ գրագրությունը՝ դատարանը վճռի կատարումը հանձնարարում է դատարանի վճիռները կատարող համապատասխան մարմնին:

Յեթե վճիռը կատարող մարմնին անհրաժեշտ է ստանալ պահանջատիրոջից վորևե լրացուցիչ տեղեկություն կամ նյութ, այդ գեղքում նա պահանջատիրոջ հետ բանակցում է Արտաքին Գործերի ժողկոմատի միջոցով:

Վճիռն ի կատար ածելուց հետո վճիռը կատարող մարմինն այդ մասին հայտնում է Արդիողկոմատին:

Վճռի կատարման պրոցեսում բոնադանձված գումարի փոխարժումը պահանջատիրոջը կամ վորևե գույքի հանձնումը նրան՝ կատարվում է բացառապես Արդիողկոմատի ցուցումով:

### ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դատական կատարածուն կատարողական վործողությունների վարույթը սկսում է այն հատուկ փաստաթղթերի հիման վրա, վորը ներկայացնում է նրան պահանջատերը, իսկ վորոշ դեպքերում հանձնում է անմիջապես դատարանը, և վորը տրվում է այն պետական մարմնի կողմից (դատարանի, արքիտրածի, նոտարի և այլն), վորի վճիռը կամ վորոշումը յենթակա յե կատարման: Այդպիսի փաստաթղթերն անվանվում են կատարողական փաստաթղթեր: Դրանց թվին են պատկանում— իսկական կատարողական թերթեր, դատական հրամաններ, նոտարական մարմինների կատարողական մակագրեր կամ այդ փաստաթղթերի համապատասխան կարգով տրված դուրիկատներ (կրկնակ), դատարանների դատավճիռներ ու վորոշումներ տուգանելու մասին, հոգուտ պետության փորոշված տուրքերի ու դատական ծախքերի մասին, համապատասխան պրոֆիլութենական կաղմակերպությունների վորոշումներ՝ հիմնված գեշի, հաշտարար կամերաների ու միջնորդ դատարանների վճիռների վրա, կատարման են յենթակա նույն հիմունքներով, ինչ հիմունքներով կատարվում են ՌԽՖՍՀ դատական, արքիտրածական ու նոտարական մարմինների տված կատարողական փաստաթղթերը:

\*) 120, 121 և 404 հոդ., Հոդ., Քր., Դատ., Որ.:

տական մարմինների կողմից արձակված վորոշումներ, Պետարքիտարաժի մարմինների հրամաններ՝ պետական ու գերատեսչական արքիտրաժների վճիռներ և արտադրական-ընկերական, գյուղական հասարակական և ժԱԿՏ-երի ու տնային տրեստների ընկերական դատարանների վորոշումներ, հաշիվ-Փակտուրաներ և Բանկի մակագրությամբ՝ նրանց չմարզած լինելու մասին, և ամուսնությունների լուծման դրանցման մատյանից քաղվածքներ՝ յերեխանների ու անաշխատունակ ամուսնությունների հարցով կայացած համաձայնագրերի մասին: ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների դատակազմության հիմքերի 19 հոդ. համաձայն («Որ. Ժող.» 1924 թ. № 23, հոդ. 203) ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների բոլոր դատական մարմինների դատավճիռները, վորոշումներն ու դատական հրամանները, այլ և դատախազության վորոշումներն ու պահանջները և դատախազության կողմից հաստատված դատական-քննչական մարմինների վորոշումները— յենթակա յեն կատարման բոլոր դատական քննչական ու վարչական մարմինների կողմից՝ նրանց իրավասության սահմաններում ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայի վրա: Այդ պատճառով այն կատարողական փաստաթղթերը, վորոնք տրված են ԽՍՀՄ իության և միութենական հանրապետությունների դատական, արքիտրաժական, նոտարական մարմինների կողմից և կատարման են հանձնվում ՌԽՖՍՀ տերիտորիայի վրա, կատարման են յենթակա նույն հիմունքներով, ինչ հիմունքներով կատարվում են ՌԽՖՍՀ դատական, արքիտրաժական ու նոտարական մարմինների տված կատարողական փաստաթղթերը:

Պահանջատերերի կողմից կատարման համար ներկայացվող կատարողական փաստաթղթերի հաշվառման գործը կանոնավորելու նկատառությունը՝ ՌԽՖՍՀ Արդիողկոմատն ու Գերագույն դատարանը հրատարակել են դատական կատարածուներին գանձման համար հանձնվող կատարողական փաստաթղթերի հաշվառման համար հատուկ հրահանգը: Այդ հրահանգով յուրաքանչյուր ժողովրդական դատարանում պետք է լինի սահմանված ձեր մատյան՝ կատարողական թերթերի և նրանց հավասարեցրած փաստաթղթերի հաշվառում կատարելու համար:

Այդ մատյանը դանդում է ժողովրդական դատարանի քար-

տուղարի մոտ և կատարողական փաստաթղթերի գրանցումը կատարում է նույն քարտուղարը, վորը կատարողական փաստաթուղթը մատյանում գրանցելուց հետո՝ այն հանձնում է դատավան կատարածվին (փաստաթղթերի հաշվառման ու գրանցման մանրամասն կանոնները շարադրված են հաջորդ գլուխներից մեկում՝ դատավան կատարածվի գործալարության մասին): Ատացականով ընդունելով ժողովրդական դատարանի քարտուղարից կատարողական փաստաթուղթը, դատավան կատարածուն, նախքան կատարողական գործողություններին գիմելը, պետք ե պարզի արդյոք ձեւական կողմից փաստաթուղթը բավարարում և պաշտոնական փաստաթղթի պահանջներին, այն և՝ ունի արդյոք ստորագրություններն ու կնիքներն այն հիմնարկության (դատարանի, արբիտրաժի, նոտարի և այլն), վորի անունից այդ փաստաթուղթը տրված է, նույնպես և այն, թե փաստաթղթում կա արդյոք վճռի կամ վորոշման այսպես կոչված ուղղվութիվ մասը, վոր յենթակա յե կատարման, այսինքն՝ նշված և արդյոք, թե ի՞նչը, ումից և ո՞ւմ ոգտին պետք ե բոնագանձմի:

Այն գեպքերում, յերբ բոնագանձումը պետք ե կատարվի պետական, կոռպերատիվ կամ հասարակական կազմակերպությունից դատական կատարածուն, բացի վերը հիշած տեղեկություններից, պարտավոր և ստուգել՝ նշված և արդյոք, թե ի՞նչ հիմքերից և առաջեցել պատասխանողի պարտքը և ի՞նչ հաշվից եքաղություն (շահագործական) թե կապիտալային շինարարության— յենթակա յե բոնագանձման դատարանի վճռում կամ արբիտրաժի հրամանում նշված գումարը:

Յեթե այդ ստուգման հետևանքով պարզվի, վոր կատարողական փաստաթուղթը հիշյալ տեսակետից թերություններ ունի, դատական կատարածուն պարտավոր և անհապաղ վերադարձնել պահանջանքական կատարողական փաստաթուղթը եր գրավոր բացատրության հետ, թե ի՞նչո՞ւ կատարողական փաստաթուղթը չի կարող ընդունվել կատարման համար և վոր արդերությունները վերացնելու համար պահանջանքական պետք և դիմի բոնագանձման վորոշումը կայացնող մարմնին:

Կարող ե պատահել, վոր դատական կատարածվին ներկայացրած փաստաթուղթն ինքնին կանոնավոր և, սակայն ավելի մոտ ծանոթանալուց հետո դատական կատարածուն կպարզի, վոր

այդ վեստաթղթով կատարողական գործողությունների վարույթն անմիջականորեն սկսվել չի կարող կամ նրա կատարուժը հետագայում կարող և հապաղել: Այդորինակ խոչընդուների թվին կարելի յե դասել, որինակ, պահանջատիրոջ և պարտազանի հասցեների մասին ստույդ տեղեկությունները չլինելը, ունի արդյոք պարտատերը վորեւ գույք և վո' բաեղ և գտնվում, այդ պահանջատիրոջ փաստաթղթում կամ դիմումում պետական և կոռպերատիվ կազմակերպությունների չպարզված կրծատ անվանման առկայությունը, պահանջատիրոջ այն ընթացիկ կամ հաշվարկային համարը չլինելը, վորին պետք ե վոխանցվեն բոնագանձմելիք գումարները և այլն: Այդ բոլոր գեղաքերում այդպիսի թերություններ պարզելուց հետո դատական կատարածուն պարտավոր և անմիջապես, առաջին՝ պահանջատիրոջ համապատասխան տեղեկություններ պահանջել, իսկ յերկրորդ՝ ինքն անձամբ կամ իր հասարակական ակտիվի միջնորդ միջոցներ ձեռք առնել անհրաժեշտ տեղեկություններ ժողովելու կատարողական փաստաթուղթ տրվող դատական և այլ մարմիններում, հասցենեղանում, գյուղխորհրդում և այլն: Համենայն գեղական դատական կատարածուն պարտավոր և բոլոր հնարակություններն ողբարդել կատարողական փաստաթղթի թերությունները վերացնելու նորատակով և թույլ չտալ, վոր բոնագանձմումը կասեցվի կամ հապաղի, այլև կատարողական թերթերը բուն ձեւական շարժառիթներով վերադարձնելը պահանջատիրոջ կողմից պարտապահն հասցեն, գույքի կազմն ու տեղը չմատնահելու հանգամանքը և այլն:

322  
33

### ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՑՆԵՐԸ

Կատարողական փաստաթղթի ձեւական կողմի ստուգման հետմիաժամանակ դատական կատարածուն պարտավոր և պարզել՝ չի անցել արդյոք բոնագանձման վաղեմության ժամկետը: Որենքով (Քաղ. Դատ. Որ. 255<sup>1</sup> Հոդ.)\* պետական, կոռպերատիվ կամ հասարակական հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև յեղած գործերով

\*) 186 Հոդ. Քաղ. Դատ. Որ.:



կատարողական թերթի կատարմանը ներկայացնելու համար սահմանված է վաղեմության ժամկետ—մի տարի, իսկ այն դորձերով, վորտեղ յերկու կողմերը կամ կողմերից մեկը մասնավոր անձինք են հանդիսանում, — յերեք տարի։ Իռնազանձումների համար սահմանված վաղեմության ժամկետները կանոնավոր կերպով հաշվելու համար կարեոր ե խմանալ, թե ի՞նչ մոմենտից պետք ե հաշվել վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը և տեղի չի ունեցել արդյոք վաղեմության ընդհատում։ Վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը վորոշելու համար գոյությունը ունեն հետյալ կանոնները։ Պատական մարմինների կատարողական թերթերի վաղեմության ժամկետը հաշվում ե այն որից, յերբ վճիռը մտել և ուժի մեջ (Քաղ. Դատ. Որ. 186 և 255<sup>1</sup> հոդ. Հոդ.՝\*) , նոտարական մարմինների կատարողական մակագրերի համար՝ սկսած նրանց հանձնման որից, հաշվվածութանքության մակագրերի ունեցող վճարման պահանջագրերով— սկսած այն որից, յերբ բանկը ստիպողական կատարման մակագիր ե կատարում։ Մնացած բոլոր կատարողական փաստաթղթերի համար (արքիտրամի հրամանների, Գլհ միջնորդ դատարանների վորոշումների և այլն) վաղեմության ժամկետը հաշվում ե կատարման յենթակա վճռի արձակման որից։ Կատարողական փաստաթղթերի վաղեմությունը հաշվելիս նկատի պետք ե առնվի այն հանդամանքը, վոր կատարողական փաստաթղթերը գանձման համար դատական կատարած վարագալան կամ բանկը ներկայացնելու դեպքերում ընդհատվում ե վաղեմության ընթացքը, և վաղեմության ժամկետն այլ դեպքերում հաշվում ե այն մոմենտից, յերբ կատարողական փաստաթղթը դատական կատարածվի կամ բանկի կողմից վերադրձել ե պահանջանջատիրոջը։

Բացի այն դեպքերից, յերբ կատարողական փաստաթուղթը ներկայացվում ե դատական կատարածվին կամ բանկին, վաղեմությունը ընդհատվում ե նույնպես պարտապանի այնպիսի գործողություններով, վորոնք վկայում են պարտքի ճանաչման փաստը, որինակ պարտքի մի մասի հոժարակամ վճարումը և այլն։ Սակայն պարտապանի կողմից պարտքը ճանաչելու այդ

\*) 186 և 255 հոդ. Հոդ.՝ Քաղ. Դատ. Որ.։

գործողությունները վաղեմությունն ընդհատում են միայն մասնակոր անձանց— պարտապանների վերաբերմաք։ Ինչ վերաբերում և պետական կոռպերատիվ կամ հասարակական կազմակերպությունների միջև տեղի ունեցած վեճերին՝ պարտապան կազմակերպությունների կողմից պարտքի ճանաչումը հաստատող գործողությունները հիմք չեն ծառայում վաղեմության ժամկետներն ընդհատելու համար (ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. ապրիլի 7 վորոշումը— «Որ. Ժող.» 1936 թ. № 18, 152 հոդ.)։

Այն բոլոր կատարողական փաստաթղթերը, վորոնց վերաբերմաքը բանագանձման իրավունքի ժամկետն անցել ե, դատական կատարածվի կողմից չպետք ե ընդունվեն և պետք ե վերադրման պարտատիրոջը։

#### ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Դատական կատարածվին ամենաբազմազան գործերով մեծքանակությամբ կատարողական փաստաթղթեր են հանձնվում։ Այսուել լինում են և ալիմենտային, և բնակարանային գործեր, և աշխատավարձի բոնագանձումներ, և բազմաթիվ բոնագանձումներ հոգուտ պետական կազմակերպությունների, կոլտնտեսությունների և այլն։ Յուրաքանչյուր դատական կատարածվի համար բոնագանձումների այդ ամբողջ հեղեղի մեջ անհրաժեշտ ե պարզել և վորոշել, թե զբանցից վորոնք են կարևորագույնները ու պետք ե իրազործվեն առաջին հերթին և վորոնք կարող են դատվել յերկրորդ հերթին։ Յերեակայենք, վոր դատական կատարածվին հանձնվել ե յերկու բոնագանձում— մեկը վարձով տված գույքի վարձի մասին, իսկ մյուսը՝ յերեակայի ապրուստի ալիմենտի բոնագանձման մասին։ Միանգամայն սխալ կլիներ, յեթե դատական կատարածուն, հաշվի չառնելով մոր ու յերեխայի շահերը, վորոնց համար ալիմենտաները գոյության հիմնական աղբյուր կարող են հանդիսանալ, վարձի բոնագանձման վերաբերյալ վճիռն սկսեր կատարել ավելի առաջ, քան ալիմենտային գործով յեղած վճիռը։

Դատական կատարածուն ակտիվ պետք ե լինի և նախաձեռնություն ցուցաբերի այն հարցում, թե ի՞նչը պետք ե կատարվի առաջին հերթին և ի՞նչը կարելի յերպարորդ հերթին։

Այդ ընտրության մեջ վճռական մոմենտ պետք է հանդիսանամ վոչ թե գործը հանձնվելու մոմենտը, վորն առաջ է հանձնվել, այն ել առաջ պետք է կատարվի, ևս առավել վոչ թե կատարման հեշտ առնելության կամ դժվարության աստիճանը— առաջ համ մի հեշտ բռնագանձումները կատարեմ, հետո՝ դժվարները։ Հերթակարության նույնունն ու կատարման ժամկետները պետք է վորոշվեն գործի կարևորության, պետության ու աշխատավորության շահերի տեսակետից։ Այն բռնագանձումների թվին, վորոնց կատարումը պետք է սկսվի անհապաղորեն՝ կատարողական թերթը հանձնելուց, և ավարտվի վոչ ուշ քան 10 որվա ընթացքում, պատկանում են բռնագանձումներ ալիմենուային, հաշմության գործերով, աշխատավարձի ու պետական մարմինների գանձումներ, հատկապես սոցիալիստական սեփականության հափշտակումներից ու վատնումներից առաջացած վնասների գործերով։ Մնացած գործերով կատարումը պետք է ավարտվի միամյա ժամկետում՝ հաշվելով կատարողական փաստաթուղթը դատական կատարածվին հանձնելու որից։

### ՊԱՐՏԱՊԱՆԻ ԾԱՆՈՒՅՈՒՄԸ

Կատարողական գործողությունները սկսվում են պարտապանին կատարման մասին ծանուցագիր ուղարկելու մոմենտով։ Նկատ կատարման մասին սույն գործը կատարում է նկատմամբ կատարելու ուղարկումը նպատակ ունի պարտապանին իրազեկ ծանուցագիր ուղարկումը նպատակ պարտապանին բարեկարգանքում, վոր պարտատերը պահանջում է նրանից վճիռը կատարել, և վոր նրա նկատմամբ կիրառովեն սովորողական բռնադաման միջոցներ, յեթե պարտապանը հօժարակամ չկատարի պահանջը։ Քաղ. Դատ. Որ. 257 հոդ.՝) հիման վրա դատական կատարման մերժականին կատարման վերաբերյալ ծանուցագիր հանձնում է, ծանուցագիր հանձնելու ընդհանուր կանոնների կարգով։ Այդ նշանակում է, վոր դատական կատարածուն ծանուցագիր կարող է ուղարկել դատական ցրիչի միջոցով, յերբ դատարկանում ցրիչ չկա, կարող է ուղարկել փոստով, տակ պարտատիրոջը, վոր նաև հանձնի պարտապանին։ Վերջապես՝ կառող է ինքն անձամբ հանձնել ծանուցագիրը պարտապանին։ Մա-

նուցագիր հանձնելու այդ միջոցներից վորեւ մեկի ընտրության ժամանակ հարկ է հաշվի առնել, վոր կատարման նախազգուշացումը ծանուցագիրով՝ անբարեխիղ պարտապանը կարող է ոգտագործել և, բռնագանձումից խուսափելու նպատակով, թաղջնել իր գույքը, փոխել իր բնակավայրը։ Այդ պատճառով այն դեպքերում, յերբ դատական կատարածուն հիմք ունի կասկածելու, վոր պարտապանը միջոցներ ձեռք կառնի բռնագանձումից խուսափելու, դատական կատարածուն ինքը պետք է հանձնի ծանուցագիրը և այդ հանձնման հետ միաժամանակ կալանք դնի պարտապանի գույքի վրա և այդպիսով զրկի նրան բռնագանձումից խուսափելու հնարավորությունից։ Այդ պրակտիկան առանձնապես նպատակահարմար է ալիմենուների, նույնպես և պետական, կոռպերատիվ և հասարակական կազմակերպությունների ոգտին բռնագանձումներ կատարելու դեպքերում։

Եանուցագիրը հանձնելու կարգը մանրամասնորեն նկարագրված է Քաղաքացիական Դատավարական Որենսգրքի 66—74 հոդվածներում\*): Շատ հաճախ նկատվում է, վոր դատական կատարածուները ծանուցագիր ուղարկում են մի որինակով, իսկ իրենց մոտ մատյանում պարտապանին ծանուցագիր ուղարկելու ժամանակի մասին միայն նշում են անում և ընալ չեն հետաքրքրում։ Հանձնված է արդյոք պարտապանին և յե՞րբ իսկապես։ Այնինչ ծանուցագրի հղումը դատարկ ձեռականություն չե, և դատական կատարածուն պարտավոր է հսկել վոչ միայն ծանուցագիրն ուղարկելու վրա, այլ և հետեւ, վոր այն իսկապես հանձնվի պարտապանին։ Ուստի ծանուցագիրը պարտապանին պետք է ուղարկել յերկու որինակով, վորպեսի յերկրորդ որինակը, պարտապանի սուրագրությամբ այն մասին, վոր ծանուցագիրն ստացել է, վերադարձնի դատական կատարածվին՝ գործին կցելու համար, վորպես պարտապանին ծանուցելու ապացույց։

Մյուս սխալն այն է, վոր դատական կատարածուները, յերբ պարտապանին ծանուցագիր չի հանձնվում ցույց տված հասցեյով չընակվելու հետևանքով, մեխանիկորեն կարճում են բռնագանձումը և կատարողական փաստաթուղթը վերադարձնում են պարտատիրոջը։ Այդ ևս ճիշտ չե։ Այդ դեպքերում դատական կա-

\*) 257 հոդ. Քաղ. Դատ. Որ.։

\*) 66—74 հոդ. հոդ. Քաղ. Քաղ. Դատ. Որ.։

տարածուն պետք և պարտատիրոջը գլությամբ հայտնի բռնագանձման գործում առաջացած խոչընդուափ մասին և նրան առաջարկի միջոցներ ձեռք առնել պարտապանի վաստացի բնակաջայրը (գոնզելու տեղը) պարզելու: Բացի այդ՝ դատական կատարածուն իր հերթին, առանձնապես ալիմենտացին, աշխատանքային: և պետության ոգտին բռնագանձումներ կատարելու գործերով, անձամբ ինքը և հասարակական ակտիվի միջոցով պետք է միջոցներ ձեռք առնի պարտապանի գտնվելու լոկական վայրը պարզելու համար՝ հարցապնդումների կարգով, ուղղված հասցեների սեղանին—քաղաքներում, և գյուղխորհուրդներին—գյուղական վայրերում: այդ հարցապնդումներով պետք է դիմել այն բանվորներին, վորոնք պարտապանի հետ ապրել են մի շենքում կամ աշխատել են միևնույն ձեռնարկությունում, պարտապանի բարեկամներին և այլն:

Որենքում չի նշված, թե ինչ տեղեկություններ պետք է պարունակի դատական կատարածվի ծանուցադիրը: Դատական ծանուցադրերին համեմատ (Քաղ. Դատ. Որ. 68 Հոդ.)\*): պարտապանին ուղարկվող ծանուցազբում պետք է նշել— դատական կատարածվի անվանումն ու հասցեն, պարտատիրոջ ու պարտապանի անվանումն ու հասցեները, անվանումն այն դատարանի կամ այն մարմնի, վորի վճիռը կատարվում ե, վճռի ժամանակը, բռնագանձման յենթակա զբանական գումարի կամ դույքի ստույտ նշումը, վճիռը հոգաբակամ կատարելու ժամկետի նշանակումը, ժողովրդական դատարանի ընթացիկ հաշվի նշումը, ուր պարտապանը պետք է մուծի զբանը: Բացի այդ՝ ծանուցազբում նախազուշացում պետք է արվի, վոր նշանակած ժամկետին պարտաքը չվճարելու դեպքում վճիռը կկատարվի ստիպողական միջոցների դիմելով:

ՊԱՐՏԱՊԱՆԻ Ի՞՞Չ ԴՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՈՒՆԳԱՆՉՈՒՄ ԿԱՐԵԼԻ ՅԵԿԻՐԱՆԵԼ

Բռնագանձումը կարող է կիրառվել (գործադրվել) միայն պարտապանի գույքի վրա: Ուստի բռնագանձման այնպիսի մի-

\*) 68 Հոդ. Քաղ. Դատ. Որ.:

ջոցառումներ, ինչպես— պարտապանին բերելը՝ պարտքը վճարելու համար իր ունեցած միջոցները ցույց տալու նպատակով, պարտապանին կալանքի յենթարկելը, տեղափոխության ազատության սահմանափակում, որինակ՝ բնակավայրից չհեռանալու ստորագրություն մինչեւ պարտքի մարումը— այդ միջոցառումները տեղի ունենալ չեն կարող:

Պարտապանի գույքի վրա բռնագանձում կիրառելու դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր բնակ վոչ ամեն տեսակի դրւյքը բռնագանձման առարկա կարող է դառնալ: Գույքի մի քանի մեսակների վրա որենքը թույլ չի տալիս բռնագանձում կիրառել: Այդ կարգի գույքերի ցանկը տրված է ՌԽՖՍՀ մկն 1933 թ. մարտի 3-ի վորոշումում («Որ. Ժող.» 1933 թ. № 16, 53 Հոդ.) և ՌԽՖՍՀ մկն 1934 թ. նոյեմբերի 3-ի վորոշումում («Որ. Ժող.» 1934 թ. № 39, 242 Հոդ.):

Այդ որենքների համաձայն բռնագանձումը չի կարող տարածվել պետական, կոռպերատիվ կամ հասարակական ձեռնարկությունների, հիմնարկությունների ու կազմակերպությունների այն գույքի վրա, վոր թվարկված է ՌԽՖՍՀ մկն 1933 թ. մարտի 3-ի վորոշման I բաժնում («Որ. Ժող.» 1933 թ. № 16, 53 Հոդ.) այն եւ:

1. Պետական գույքը, վորը ՌԽՖՍՀ Քաղաքացիական Որենսությունը 22 Հոդվածով\*): ոտարման յենթակա չեւ:

2. Կոռպերատիվ և կոլտնտեսային արդյունաբերական և տնայնագործական-արհեստագործական ձեռնարկությունները (չենք, սարքավորում ու գործիքներ), վորոնք վերաբերում են տվյալ ձեռնարկության արտադրական գործունեյությանը:

3. Արհեստագործական-կոռպերատիվ կազմակերպությունների անբաժանելի Փոնդերը և կոլտնտեսությունների ու արդյունաբերական կոլտնտեսությունների հետեւյալ Փոնդերը— անմասնատելի, կապիտալային շինարարության, սերմացուի, անասնակերի ու ապահովագրական Փոնդերը:

4. Ձեռնարկության յերեք ամսվա աշխատանքի համար անհետեշտ հումքն ու վառելանյութը:

\*) 22 Հոդ. Քաղ. Դատ. Որ.:

5. Բնակելի ու տնտեսական շենքերը:

6. Գյուղատնտեսական մեռյալ ինվենտարը՝ այն չափով, ինչ չափով անհրաժեշտ և ավյալ տնտեսության արտադրական պլան-ների կատարման համար. այն դեպքերում, յերբ այդ նպատակի համար անհրաժեշտ ինվենտարի քանակը ճիշտ սահմանվում է տնտեսության հենց արտադրական պլանով, բռնագանձում կատարող մարմիններն այդ պլանի տվյալներով են դեկավարվում:

7. Զգալաքած բերքը:

8. Կոլտնտեսությունների միջև բաշխման յենթակա պարենային արտադրանքի այն մասը, վոր անհրաժեշտ և կոլտնտեսականների ու նրանց խնամքի տակ գտնվողների ապահովման համար՝ մինչև հետագա տարվա բերքի բաշխման ժամանակը, հաշվելով ամուսինան յուրաքանչյուր մարզու համար—16 կդ տԱՄուր (կամ 18 կդ Հացահատիկ), 16 կդ կարտոֆիլ, 3 կդ ձավար, 400 զրամ բուսական յուղ, կամ 1,5 կդ ձիթատու բույսերի սերմ, 5 կդ բուրու տեսակի բանջարեղեն (կամ 4 կդ ձուկ կամ միս). յենելով տեսական պարմաններից՝ նշված մթերքները կարելի յև փոխարինել այլ մթերքների համապատասխան քանակությամբ. կոլտնտեսությունների արտադրանքի նշված մասը վորոշելու ժամանակ պետք է հաշվի առնվի տվյալ տնտեսական տարվա մթերքների արգեն կատարված բաշխումը:

9. Խորհանտեսությունների արտադրանքը, վորը զատման և յենթակա բանվորների հասարակական սննդի համար՝ առաջիկա յերեք ամսվա անհրաժեշտ քանակով:

10. Սերմեր այն քանակով, վոր անհրաժեշտ և ընթացիկ դյուղատնտեսական տարիա ցանքի համար՝ համաձայն մինիմալ նորմանների, վոր սահմանվում են տեղական հողային մարմինների կամ վորոշ դեպքերում՝ խորհանտեսությունների ժողկոմատի մարմինների կողմից:

11. Անասուն այն քանակով, վոր անհրաժեշտ և տնտեսության արտադրական պլանի կատարման համար՝ համաձայն տեղական հողային մարմինների կամ՝ վորոշ դեպքերում՝ խորհանտեսությունների ժողկոմատի մարմինների կողմից սահմանված նորմանների, նույն թվում ձմեռն անց կացրած վոչխարների ու այծերի ամբողջ մատղաշը (գառներ), խոկ կոլտնտեսությունների, վորտեղ կթի անասունը (МОЛОЧНЫЙ ҄ԿՈՏ) համայ-

նացված է, նույնպես մեկ կով ու մինչև մեկ ու կես տարեկան մեկ հորթ կուկուխիլի յուրաքանչյուր հիմք ուսողի համար:

12. Անասունի կեր այն քանակով, վոր անհրաժեշտ և մինչև նոր կեր հավաքելու կամ մինչև արոտավայր գուրս համելու ամբողջ ժամանակաշրջանի համար, հաշվելով մեկ ամսվա կեր՝ կովերի համար 360 կդ խոտ, մանր յեղիքավոր անասունի համար—60 կդ խոտ, յեղների համար—490 կդ խոտ, հորթերի համար—212 կդ խոտ, ձիերի համար—300 կդ խոտ և 130 կդ գարի (գարսակ), գուռակների համար—120 կդ խոտ և 60 կդ գարի, խոչոր խողերի համար—66 կդ կեր, խողերի նորոգընտիր մատղայի համար—42 կդ կեր և բավող խողերի համար—48 կդ կեր հայտատիկային հաշվով: Պարտապահի հայտարարությամբ խոտար կարելի յև փոխարինել դարմանի համապատասխան քանակով, ամելացնելով դրան անհրաժեշտ խառնուրդ՝ ալյուրի, թեփի կամ խտացրած կերի համապատասխան քանակով:

13. Կոռակերատիվ կազմակերպություններից վերագաս կոռապերատիվ կազմակերպություններին վճարվելիք փայտամուծումները:

14. Գյուղատնտեսության արտադրական յերկարաժամկետ վարկավորման և սոցգուղատնտեսության ֆինանսավորման Փոնդին կոլտնտեսությունների և այլ կազմակերպությունների ու հիմնարկությունների կողմից հասանելիք մուծանքները, նույնպես և այդ Փոնդի հաշվին մուծվելիք անտոկոսային վճարումները:

15. Պարտապահին պարտադիր ապահովագրման կարգով հասանելիք ապահովագրական վարձատրությունը: Մասնավոր անձերից բռնագանձումներ կատարելու դեպքում գույքի տեսակների ցանկը, վորոնց վրա չի կարելի բռնագանձում կիրառել, տարբեր երինում, նայելով, թե բնակչության սոցիալական վոր խմբին և պատկանում պարտապահը: Յեթե պարտապահն են հանդիսանում բանվորներ, ծառայողներ կամ նրանց հայտարեցրած անձեր, բացառությամբ նրանց, ովքեր յեկամտային հարկի կապակցությամբ III կատեգորիային են դասված, նույնպես և յերբ բռնագանձումը կիրառվում է կոլտնտեսականի գույքի վրա և գյուղատնտեսական հարկով հարկված տնտեսությունների գույքի վրա, այդ թվում և մենատնտես գյուղացիական տնտեսություն-

ների, վերդրման չպետք է յենթարկվի այն գույքը, վոր թվարկելած և ՌԽՖՍՀ մկն 1933 թ. մարտի 3 վորոշման 2-րդ բաժնում՝ 1934 թվի նոյեմբերի 3 խմբագրությամբ («Որ. Ժող.» 1934 թ. № 39, 242 հոդ.) այն ե՝

1. Պարտապանի և նրա խնամքի տակ գտնվող անձերի համար անհրաժեշտ ձմեռային և ամսուային հաղուստ, սպիտակեղեն, վոտնաման և տեսային զործածության համար այլ անհրաժեշտ իրեր.

ա) յուրաքանչյուր անձի համար ձմեռային և ամսուային հաղուստ—մեկ ամսուային կամ աշնանային վերարկու (կամ յակինչի), խալաթ (զիպոն), անթի բաճկոն (ոճճեւեկ), մեկ ձմեռային վերարկու (կամ կիսամուշտակ, քուրք և այլն), մեկ ձմեռային հանդերձ (կանանց համար յերկու ձմեռային գեյրա), մեկ ամսուային հանդերձ (կանանց համար յերկու ամսուային գեյրա), մեկ գլխարկ (շլապա), և մեկ գողակ, կանանց համար բացի այդ յերկու ամսուային աղլուխ և մեկ տաք գլխի աղլուխ (չալ), բացի այդ բոլորից, մշտապես գյուղատնտեսությամբ պարապող ընտանիքի համար, մեկ մուշտակ.

բ) սպիտակեղեն՝ յուրաքանչյուր անձի համար յերեք ձեռք.

գ) յուրաքանչյուր անձի համար մեկ զույգ կաշվե և մեկ զույգ թաղիքե (վալենկա) վոտնաման.

դ) անային գործածության համար այլ անհրաժեշտ իրեր՝ յուրաքանչյուր անձի համար մեկ սեղանի (ափսե, պատառաքաղ, դանակ ու գդալ), և մեկ թեյի (բաժակ կամ թաս և բաժակապնակ) սպասք (ոքինօր), մեկ աթոռ (տարուրես), մեկ ձեռք անկողին (դոշակ, բարձ, յերկու սալան, յերկու բարձերես, վերմակ), մեկ մահճակալ, յերկու յերես սրբիչ, յուրաքանչյուր ընտանիքի համար մեկ ինքնայեռ (թեյաման կամ ջուր տաքացնելու թուջե աման), պրիմուս (կամ կերասինկա), լամպ, ձաշի ալղան, յերկու ճաշասիսոց, յերկու թեյի սրբիչ, յերկու խոհանոցի սրբիչ, յերկու դույլ, մի զամբյուղ (կամ այլ, դրան փոխարինող զետեղաբան, հագուստեղեն պահելու համար), խոհանոցի ամենաանհրաժեշտ կահույք (կաթուաներ, թուջե պտուկ և այլն):

Եռեցն նորմաներով վերգրման յենթակա չի հարգելի պատճառներով ժամանակավորապես բացակայող ընտանիքի այն ան-

դամների գույքը, վորոնք հաշվի յեն առնված գյուղատնտեսական հարկի հաշվարկման ժամանակ:

2. Կերակուր յեկելու և պարտապանի ընտանիքի շենքը տաքացնելու համար անհրաժեշտ վառելանյութի յերեք ամսվապաշարը:

3. Առանց վարձու աշխատանքի գործող պարտապանի պրոֆեսիոնալ զբաղմունքների համար արտադրության անհրաժեշտ սարքավորում, գործիքներ, պիտույքներ և գրքեր, նույնական և այն արտադրողների, վորոնք ունեն մի վարձու բանվոր, յեթե այդ պահանջում են արտադրության պայմանները.

ա) արհեստի ու տնայնագործական զբաղմունքների համար անհրաժեշտ արտադրական գործիքներ ու սարքավորում պարտապանների այն կատեգորիաների, վորոնք գործող որենսդրության համաձայն չեն հարկվում արհեստագործական հարկավ:

բ) անձնական պլոֆեսիոնալ զբաղմունքների համար արտադրության անհրաժեշտ գործիքներ, սարքավորում, պիտույքներ ու գրքեր:

Նշված առարկաները վերգրման յենթակա չեն և այն կատեգորիաների անձանց մոտ (փականագործների, հյուսների, մոնտյուրների, բժիշկների, յերաժիշտների, գծագրիչների և այլն), վորոնք ծառայության կամ վարձու աշխատանքի մեջ են գտնվում, նույնը տարածվում ե և սովորողների (աշակերտ, ուսանող և այլն) վրա:

4. Յ-րդ կետում նշված անձերի յերկու ամսվա փաստացի աշխատանքի համար անհրաժեշտ հումքը և վառելանյութը:

5. Կոլոնտեսականների համար անհրաժեշտ անասունը, տնային թռչնեղենը և գյուղատնտեսական ինվենտարը.

ա) յուրաքանչյուր տնտեսության համար մեկ կով ու մինչեւ մեկ ու կես տաթեկան չորթ. տնային թռչուններ (ձալեր, սագեր, բաղեր), յուրաքանչյուր տեսակից հինգ հատից վոչ ավելի. վոչիարներ՝ մինչեւ նրանց գառններին ծծից կտրելը, այն և գառնների ծնունդից հետո մինչեւ չորս ամիս, մի գլուխ խոչընականը հավասար և հարկվող տարիքի 6 գլուխ մանր անասունի (վոչխարներ, այծեր).

բ) գյուղատնտեսական ինվենտար—ամեն մի տնտեսության համար անհրաժեշտ թվով մանր ինվենտարի (գերանդիներ, ման-

գաւներ, կացիններ, փոցիներ, սղոցներ, յեղաններ, բահեր և այլն) և մի մակույկ՝ հեղեղումներին յենթակա շրջաններում. վորովության, ձկնորսային և այլ զբաղմունքների արհեստագործական անհրաժեշտ գործիքներ այն տնտեսություններում, վորովության անհրաժեշտ գործիքները յեկամտի հիմնական աղբյուրներն են հանդիսանում:

6. Կոլտնտեսականի անտեսության անխղելի պատկանելություն կազմող բնակելի ու տնտեսական շենքեր, նմանապես պետական մարմիններից արտոնյալ պայմաններով ստացված ու շենքերի համար հատկացված անտառ:

7. Պարենամթերքներ, վորոնք աղահովում են կոլտնտեսականներին ու նրանց խնամքի աակ գտնվողներին մինչև նոր բերքը՝ անհրաժեշտ քանակով, հետեւյալ հաշվով մի ամսվա համար՝ 14 կտ ալյուր (կամ 16 կտ հացահատիկ), 16 կտ կարտոֆիլ, 2 կտ ձնվար, 1½ կտ աղ, 400 գր. բուսական յուղ (կամ 1½ կտ ձիթառու բույսերի սերմ), 4 կտ բոլոր տեսակի բանջարեղեն (կամ 4 կտ ձուկ):

8. Սերմացու՝ տեղական հողային մարմինների կողմից սահմանվող մինիմալ նորմաներով:

9. Կեր անասունների համար՝ մինչև նոր կերի հավաքը կամ մինչև անասուններին արտավայրը դուրս հանելը՝ մի ամսվա համար անհրաժեշտ քանակով՝ կովերի համար՝ 325 կ. խոտ, մանր յեղիքավոր անասունի՝ 48 կ. խոտ, հորթերի՝ 212 կ. խոտ, ըստ վորում պարտապանի հայտարարության հիման վրա խոտը կտրող և փոխարինվել համապատասխան քանակի դարմանով՝ ավելացնելով դրան անհրաժեշտ խոտնորդ ալյուրի, թեփի կամ խոտացրած կերի համապատասխան քանակով:

10. Բանջարանոցների, պտղատու ու խաղողի այգիների և հատապտուղների (ՔՈԾԱԽ), բացառությամբ արդյունաբերական նշանակություն ունեցողների՝ չհավաքած բերքը:

11. Կոռպերատիվ կազմակերպությունների անդամների վայրիները:

12. Պարտապանին սրաբադիր ապահովագրման կարգով հասանելիք ապահովագրական վարձատրությունը, նմանապես սոցիալական ապահովագրման կամ սոցիալական ապահովագրման կարգով տված գումարները: Բացի այդ՝ կատարողական թերեկարդով տված գումարները: Բացի այդ՝ կատարողական թերեկարդով ապահովացրած փաստաթղթերի բոնագանձումները

չեն կարող տարածվել հետեւյալ դյուզատնտեսական ինվենտարի և բանող անասունների վրա— ամեն մի գյուղացիական տնտեսության համար՝ մեկ արոր, մեկ գութան, մեկ փոցի, մեկ սայլ, մեկ սահնակ ու լծասարք, մեկ ձի (կամ մեկ ուղարկան համար մեկ գորկու ձի) և բանող անասունի մեկ դլուխ մատղաշ՝ մինչև յերեք տարեկան հասակի («Որ. Ժող.» 1934 թ. № 39, Հոդ. 243):

Յեթե հանրայնացված սեկտորի հիմնարկությունների կազմակերպությունների ու ձեռնարկությունների ոգտին կատարողական թերթերով նախատեսված բոնագանձումները կիրառվում են այն անձանց գույքի վրա, վորոնք յեկամտային հարկի տուրքադրման կարգով դասված են III կատեգորիայի, նույնպես և նշված անձերից աշխատավարձի, ալիմենաների և աշխատավորի անձին կամ գույքին հասցրած վնասի փոխառուցման բոնագանձումներ կատարելու դեռքերում՝ բոնագանձումներից աղատվում և այն գույքը, վոր թվարկված ե ՌԽՖՍՀ ժկլ 1933 թ. մարտի 3-ի վորոշման 3-րդ բաժնում և ՌԽՖՍՀ ժկլ 1934 թ. նոյեմբերի 3-ի վորոշումում (ՌԽՖՍՀ «Որ. Ժող.» 1934 թ. № 39, Հոդ. 242), այն ե՝

1) ձեռային և ամառային հագնելու հաղուստ. յուրաքանչյուր անձի համար— մեկ ամառային կամ աշնանային վերաբեր (կամ յափնջի, խալաթ, անթե բաճկոն և այլն), մեկ ձմեռային վերաբեր (կամ կիսամուշտակ, մուշտակ, քուրք և այլն), մեկ ձեռք ձմեռային զգեստ (կանանց համար՝ յերկու ձմեռային գեյրա), մեկ ձեռք ամառային զգեստ (կանանց համար՝ ամառային յերկու գեյրա), մեկ գդակ (շլյապա) և մեկ փափախ, իսկ կանանց համար, բացի այդ, յերկու ամառային գլխի աղլուխ և մեկ տաք աղլուխ (կամ չա):

2) յուրաքանչյուր անձի համար յերկու ձեռք սպիտակեղեն.

3) յուրաքանչյուր անձի համար մեկ զույգ կաշվե և մեկ զույգ թաղիքե կոչիկներ.

4) տնային գործածության համար այլ անհրաժեշտ առարկաներ՝ յուրաքանչյուր անձի համար— մեկ սեղանի (ափսե, պատառաքաղ, դանակ ու գդալ) և մեկ թեյի (բաժակ կամ թաս և բաժակապանակ) սպասք, մեկ աթոռ (տարուրեա), մեկ ձեռք

անկողին (գոշակ, բարձ, յերկու սավան, յերկու բարձերես, վեր-մակ), մեկ մահճակալ, յերկու անձնական յերեսրբիչ. յուրա-քանչյուր ընտանիքի համար— ինքնայեռ (թեյաման կամ ջուր առաքացնելու թուջե աման), պրիմուս (կամ կերասինկա), լամպ, ճաշի սեղան, յերկու ճաշասփոռց, յերկու թեյի սրբիչ, յերկու դույլ, մի զամբյուռ (կամ այլ, զբան փոխարինող գետեղարան՝ հագուստեղին պահելու համար), խոհանոցի ամենանհրաժեշտ կահույք (կաթսաներ, թուջե պնակներ և այլն):

Գույքի տեսակների նույն ցանկը կիրառվում է այն բոլոր դեպքերում, յերբ բանագանձումներ են կատարվում պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների, կոլոնտեսությունների, կոռպերատիվ և հասարակական կաղմակերպությունների գույքի հափշտակման, վատնման ու յուրացումների փոխհատուցման կարգով:

Բացի այն գույքեց, վորը նշված ե ՌԽՖՍՀ Համեմական ժկկ. վորը հեշտած վարույթներում, չի թույլատրվում բանագանձում կերառել հեղինակի իրավունքի և գյուտարարության իրավունքի վրա: Այդ գեղագիտում բանագանձումների առարկա կարող են մինել միայն հեղինակի իրավունքի և գյուտարարության իրավունքի իրացումից ստացվող յեկամուտները (հեղինակին պատկանող բացառիկ իրավունքների ոգտագործման վարձատրություն):

Վերջապես՝ առանձին ցանկն այն գույքերի, վորոնց վրա բանագանձում չի կարող կերառվել վարչական կարգով գրած տուղանքները մարելու համար՝ դատարանների կողմից արձակված վճիռներով գույքը վերգրելու մասին, սահմանադա և ԽՍՀՄ ԿԳԿ և մկն 1937 թ. ապրիլի 11-ի վորոշումով («Որ. Ժող.» № 30, Հոդ. 120):

Այդ ցանկը սահմանավակելած է միայն հետեւյալ գույքով.

ա) բնակելի տուն իր տնտեսական շենքերով՝ կամ նրա մասները.

բ) մեկ կով կամ, կով չլինելու դեպքում, մեկ հորթ, իսկ կոլոնտեսականների նկատմամբ— նաև տնային թուչուններ, վոչ-խարհներ, այծեր և խոզեր՝ այն նորմայի կիսի սահմաններում, վոր սահմանված և գյուղատնտեսական արաելի կանոնադրությամբ, անասունների համար, անասունների համար ամհրաժեշտ կերով հանդերձ.

գ) հագուստեղեն, վոտնամաման, սպիտակեղեն, անկողնի սարք, խոհանոցի կահույք, մահճականներ, սեղաններ, աթուներ, սըն-դուկտներ, լամպեր, իրեր, վոր ծառայում են պարտապանի անձնական և նրա ընտանիքի ոգտագործման համար, բոլոր մանկական պիտույքներ.

դ) պարտապանի և նրա ընտանիքի՝ սննդի համար անհրաժեշտ մթերքներ մինչև նոր բերքի հասնելը.

ե) սոցիալական ապահովագրման կարգով ստացված միջոցներ, նմանապես բազմազավակության համար աված նպաստներ.

զ) պարտապանի անայնագործ արհեստի աշխատանքները շարունակելու համար անհրաժեշտ գործիքներ:

Վերը թվարկած գույքի այն տեսակների ցանկերի պահպանումը, վորոնց վրա բոնագանձում չի կարելի կիրառել, դատական կատարածվի կարեռագույն պարտականությունն և հանդիսանում: Դատական կատարածվի կողմից այդ ցանկերի վորել կամայական ընդլայնում կամ սղմում անթույլարելի յեւ և կհանդիսանա վորպես սոցիալիստական որինականության ամենակոպիտ խախտում: Դատական պրակտիկային հայտնի յեն որինակներ, յերբ դատական կատարածվի կամայականությունը՝ գույքի վրա բոնագանձում կիրառելու հարցում (վերգիր ու վաճառք մեքենաների և գյուղատնտեսական ինվենտարի, անասունների կեր, կոլոնտեսությունների ու խորհունտեսությունների ձիերի ու յեղների վաճառք և այլն) խորհունտեսությունների ու կոլոնտեսությունների արտադրական սլանների կատարումը վիճեցման սպանութիքի տակ եր դնում: Ի խուսափումն նման հետեւանքների, վոր ձեռնոտու յեն միայն դասակարգային թշնամիներին ու վնասարարներին, վորոնք ձգտում են սոցիալիստական շինարարության վիճեցման ու կոլոնտեսությունների քայլայում առաջանելու, դատական կատարածուները խստորեն պետք ե կիրառել մկն 1933 թ. մարտի 3-ի և 1934 թ. նոյեմբերի 3-ի վորոշումները և վոչ մի դեպքում իրենց թույլ չպետք և տան շեղվելու այլ որենքների պահանջներից:

Յեթե կատարման պրոցեսում դատական կատարածվի մեջ տարակուսանքներ առաջանան՝ այս կամ այն գույքը վերգրի արձանագրության մեջ մտցնելու առթիվ, այդ գեղագրերում նա պետք ե դիմի ժողովատարան՝ համապատասխան ցուցումները ստանալու համար:

Պարտապանի գույքի վրա բռնագանձում կիրառվում է այդ գույքի վրա կալանք դնելու և այդ իրացման յենթարկելու միջով՝ վաճառքի կամ այդ գույքը պարտատիրոջը հանձնելու կարգով։

Կալանք դնելն ունի յերելու մոմենտ՝ առաջինը, գույքի վերգի կազմելը, այն է՝ հատուկ արձանագրության մեջ իրերի ու առարկաների ցուցակագրում՝ նշումով, թե ի՞նչ տարբերող հատկանիներ ունեն այդ իրերն ու առարկաները և ինչ արժողություն ունի յուրաքանչյուր իրն ու առարկան, յերկրորդը, հայտարարում պարտապանին, վոր գույքի վերգրման պահից սկսած նրան արգելվում է կարգադրություններ անել վերգրված գույքի վերաբերմամբ այսինքն՝ նա չուտք և այն վաճառի, ընծայի վորեւ մեկին, վոչնչացնի և այն՝ վատնումի հանցագործության քրեական պատասխանատվության սովորությից տակ։

Յեթե վերգրման ընթացքում դատական կատարածվի մեջ կասկածներ են առաջանում, վոր պարտապանը դատական կատարածվի բացակայության ժամանակ վերգրված իրերը կարող են փոխարինել այլ իրերով, վորոնք վորակով ավելի վատ և արժեքով ավելի ցած են, դատական կատարածուն այդ իրերը վերգրման ցուցակը մտցնելու հետ միաժամանակ կարող են իրերի կամ պահարանի վրա, վորտեղ դարձած են այդ իրերը, իր կնիքը գնել։ Որենքի համաձայն գույքի վերգրումը պետք է կատարվի պարտապանի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ։ Սակայն պարտապանի բացակայությունը վերգրում կատարելուն խոչընդոտ ծառայել չի կարող, և պարտապանի բացակայության վերգրում վերգրում կարող է կատարվել պարտապանի ընտանիքի չափահաս անդամների վորեւ մեկի ներկայությամբ կամ դատական կատարածվի կողմից հրավիրված այն չենքի տնային վարչության ներկայացուցչի ներկայությամբ, վորտեղ ապրում է պարտապանը, իսկ գյուղական վայրերում-գյուղաբնորչությունների ներկայացուցչի ներկայությամբ։ Գույքի վերգրումը պետք է կատարվի անպայմանորեն անձամբ դատական կատարածվի կողմից։ Դատական կատարածուն վերգրման գործն իրավունք չունի հանձնելու իր հասարակական ակտիվին։

Գույքի վերգրման հետ միաժամանակ դատական կատարածուն վերգրված գույքը գնահատում է։ Գույքը պետք է գնահատվի նրա իսկական արժողության համաձայն։ Յեթե հարկ է լինում վերգրի արձանագրության մեջ մտցնելու այնպիսի գույք, վորը գնահատել դատական կատարածուն դժվարանում է, որինակ՝ նկարներ, հինավորց իրեր և այլն, նույնպես և այն դեպքում, յերբ վերգրման ներկա յեղող պարտապանը կամ նրա ներկայացուցչը դատական կատարածվի գնահատմանը համաձայն չեն, դատական կատարածուն պարտավոր է գնահատման համար գիտակ անձեր հրավիրել (եքսպերտ), որինակ՝ լոմբարդի գնահատիչների, խանութների վաճառորդների, վորոնք տվյալնեսակի գույքի վաճառքով են զրադվում և այլն։

Գույքի մի քանի անսակների նկատմամբ գնահատման չափերը նշվում են որենքում։ Այդպես՝ յեթե բռնադանձումը մարելու համար վերգրման են յենթարկվում պարտապանի անսառները, գրանք պետք է գնահատվեն հետեւյալ գներով։ բանող ձիերը, յեղային անսառները, կաթնատու կովերը և մսացու անսառները պետական մթերումների գներով, իսկ մնացած անսառները՝ ալյալ վայրի համար սահմանված կոնվենցիոն գներով։ պարտապանին անձնական սեփականության կամ կառուցման իրավունքով պատկանող չենքերը վերգրման ժամանակ գնահատվում են դրանց համար սահմանված ինվենտարիզացիոն կամ ապահովգրման զներով։

Գործնականում նկատվում են դեպքեր, յերբ դատական կատարածուները վոչ բավարար լրջությամբ են մոտենում գույքի գնահատման մոմենտին, կարծելով, վոր գույքի գնահատումը վերգրման ժամանակ պայմանական նշանակություն ունի և վոր հետագայում գույքը աճուրդով վաճառելու ժամանակ, միենույն է, նրա իսկական արժեքը կապազվի։ Այդ հիմունքով դատական կատարածուները հաճախ տալիս են կամայական գնահատում, ձգտում են վերգրի յենթարկել վորքան կարելի յե ավելի շատ շույք՝ իջեցրած, նվազեցրած գնահատմամբ։ Այդ յերկույթի դեմ անհրաժեշտ է վճռականորեն պայքարել։ Պարտապանի դեմ բռնադանձման ստիպողական միջոցների խիստ ու անշեղ կիրառման պահանջը բնավական չեն գնահակում, թե վճիռը պետք է կատարել

պարտապանին քայքայելու կամ նրանից ավելի մեծ քանակով  
գույք վերդելու միջոցով, քան հարկավոր և պարտատիրոջ  
պարտքը մարելու համար:

Յերեք չպետք է մոռանալ, վոր վերդրելու ժամանակ զատա-  
կան կատարածուն բոլոր գեղեցիում պարտավոր և յենել գույքի  
խսկան արժեքից և վերդրել միայն այնքան իրեր, վորոնք իրոք  
անհրաժեշտ են պարտքը մարելու համար: Դատական կատարա-  
ծուն պետք է հաշվի առնի նմանապես պարտապանի հայտարա-  
բությունն այն մասին, թե վերջինս ի՞նչ գույքի վրա յե ցանկա-  
նում առաջին հերթին բռնադանձումը գործադրել: Յեթե պարտա-  
պանի պահանջներն այդ ուղղությամբ խոչընդուն չեն հանդիսա-  
նում վճռի շուտափույթ ու լրիվ կատարմանը, դատական կատա-  
րածուն պարտավոր և բավարարել այդ պահանջները:

### ԴԻՄՈՒՄՆԵՐ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԳՐԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերգիր կատարելու միջոցին հաճախ պատահում են դեպքեր,  
յերբ դատական կատարածվին պարտապանը կամ յերրորդ ան-  
ձերը հայտարարում են, վոր այն գույքը, վոր դատական կատա-  
րածուն մտադիր ե վերգրել, պատկանում ե վոչ թե պարտապա-  
նին, այլ յերրորդ անձանց: Նման վոչ բոլոր հայտարարու-  
թյուններին կարելի յե հավատ ընծայել, վորովհետև անբարե-  
խիղա պարտապանն յերբեմն անձամբ, յերբեմն ել կեղծ անձանց  
միջոցով նման հայտարարություններ ե անում՝ վերգրումից իր  
դույքը թագցնելու կամ առնվազն բռնադանձումը ձգձգելու նպատա-  
կով: Սակայն նույնպես անթույլատրելի յե անխստիր անուշադրու-  
թյան մատնել պարտապանի կամ յերրորդ անձանց այդպիսի հայ-  
տարարությունները: Յուրաքանչյուր այդպիսի հայտարարություն  
դատական կատարածուն պարտավոր և պարզել և ուշադրությամբ  
ու քննադատորեն մոտենալ հարցին: Մի շարք դեպքերում  
յերրորդ անձանց այն հայտարարությունների պարզումը, թե  
գույքը պատկանում ե նրանց և վոչ պարտապանին, կարող ե պա-  
հանջել բարդ սոսուղողական դործողություններ, որինակ՝ վկա-  
ների հարցաքննություն, զանազան պետական հիմնարկություն-  
ներից ու կազմակերպություններից պահանջվելիք փաս-  
տաթղթեր և այլն: Հասկանալի յե, վոր դատական կատարածվին  
այդ նպատակների համար համապատասխան իրավունքներ ու

Հնարավորություններ չեն վերապահված, այդպիսի ստուգում-  
ներ կարող ե կատարել միայն դատարանը:

Եման գեղեցիում դատական կատարածուն պարտավոր և  
պարտապանի կամ յերրորդ անձի հայտարարությունը դրանցել  
մասյանում, մտցնել գույքը վերգրի մեջ և բացատրել պարտա-  
պանին կամ յերրորդ անձին, վոր նրանց հայտարարությունը,  
գույքը վերգրից հանելու մասին նա պետք ե ներկայացնի ժո-  
ղովրդական դատարան: Սակայն, յերբ պարտապանի կամ  
յերրորդ անձի հայտարարությունը հաստատվում է ստույչ  
ապացույցներով, վորոնք դատական կատարածվին բերում են  
այն համապատական պատճառները, վոր վերգրման յենթակա-  
նում և յերրորդ անձին, և վոչ պարտապանին (որինակ՝ դատա-  
կան վճռու, վորով այդ գույքը վորոշված ե հոգուտ յերրորդ ան-  
ձի, կամ գույքի վրա յերրորդ անձի իրավունքը հաստատող նո-  
տարական փաստաթուղթ և այլն), դատական կատարածուն այդ  
գույքը չպետք ե վերգրի, նշելով կատարողական գործողություն-  
ների մատյանում այն պատճառները, վորոնց հիման վրա նա  
գույքը չի մտցրել վերգրի մեջ:

Նկատի ունենալով, վոր ամենից հաճախ գույքը վերգրից  
հանելու վեճերը ծագում են այն գույքի վերաբերմամբ, վորին  
տեր և հանդիսանում պարտապանն իր ընտանիքի անդամների  
հետ միատեղ, կանգ առնենք այն կանոնների վրա վորոնցով ան-  
հրաժեշտ և ղեկավարվել ընտանիքի ընդհանուր գույքի, գյու-  
ղացիական ու կոլտնտեսային գույքի վրա բռնագանձում կիրա-  
ռելու գելքերում:

Ամուսնության, ընտանիքի ու խնամակալության որենքների  
10 հոդ.\*): Համաձայն՝ այն գույքը, վոր պատկանել և ամուսին-  
ներին մինչեւ նրանց ամուսնանալը, մնում է վորպես նրանց բա-  
ժան (առանձին) գույք: Ամուսինների ընդհանուր գույք հաշվում  
և միայն ամուսնության ընթացքում ձեռք բերած գույքը: Այս-  
ուղիղ հետեւում է, առաջին՝ այն, վոր ամուսիններից մեկի անձ-  
նական պարտքերի բռնագանձման դեպքում չի կարելի բռնագան-  
ձումը գործադրել մյուս ամուսնու անձնական սեփականությունը  
կազմող գույքի վրա, ինչպես մինչեւ ամուսնությունը ձեռք բե-  
րածի, և յերկրորդ՝ այն դեպքերում, յերբ ամուսիններից մեկի

\*) Հոդ. 10 «Ամուսնության, ընտանիքի և խնամակալ. Որ.»:

անձնական պարտքերի դիմաց ընտանիքի ընդհանուր գույքի վրա յե բռնագանձումը գործադրվում (ամուսնության ընթացքում ժե բռնագանձումը գործադրվում ընդհանուր գույքից միայն պարտապանին գույքը, այլ ընտանիքի ընդհանուր գույքից միայն պարտապանին հասնող մասը: Այս դեպքերում, յերբ վերջբար միջոցին անհնար հանող մասը: Այս դեպքերում, յերբ վերջբար միջոցին անհնար հանուր գույքը և ինչ առարկաներ են կազմում ամուսինների ընդ ելորշել, թե ինչ առարկաներ են կազմում ամուսինների ընդ ելորշել, ամուսինները և ինչ առարկաներ՝ նրանց բաժան (առանձին) հանուր գույքը և ինչ առարկաներ են կազմում ամուսինների ընդ ելորշել, ըստ վորում այդ հարցերի վորոշումը պատիվանում է մանրամասն դատական քննություն, դատական կատա հանջում է մանրամասն դատական քննություն, վորոշումը գույքից մասնամեր սեփականությունը, ըստ վորում այդ հարցերի վորոշումը պատիվանում է ամուսինների բնակարանում գտնված ամ բածուն պարտավոր և ամուսինների բնակարանում գտնված ամ բածուն պարտավոր և ամուսինների բնակարանում յենթակա բողոքը կատարելու (բռնագանձման յենթակա բողոքը գույքը վերջբարում կատարելու չափով). միաժամանակ նա պետք է բար գույքը վոչ ավելի չափով: միաժամանակ նա պետք է բար գույքը վորը բռնագանձման գործով պատասխանորդ (դատակիր) չի հանդիսանում, վոր նրան անձամբ պատկանի նող գույքը կարող է վերջբարումից ազատվել միայն դատարանի միջոցով, վորին նա՝ ամուսինը կարող է հայց ներկայացնել միջոցով, վորին նա՝ ամուսինը կարող է հայց ներկայացնել մայդ գույքի վրա իր սեփականությունը ճանաչելու կամ ընդհա այդ գույքի վրա իր սեփականությունը ճանաչելու ամուսինը վորո նուր գույքի յուրաքանչյուր ամուսնուն ճանանելիք մասը վորո չելու մասին:

Դյուլացիական (կոլտնտեսային) գույքի վերաբերմամբ կերպարվում են հետևյալ կանոնները: Ծիփ ամբողջ գույքի վրա բառվում են հետևյալ կատարել միայն այն վճիռների թույլատրվում և բռնագանձում կիրառել միայն ամբողջ ծիփ դեմ: Իսկ այն հիման վրա, վոր արձակվում են ամբողջ ծիփ դեմ: Իսկ այն հետևյալ կատարում, յերբ կատարուական հաստատվելու ընդհան ձում պետք է կատարվի դյուլացիական կամ ամուսինը անձամբ անդամը միայն պատասխանին, այլ բայց, վերջբար կարող է յենթարկվել միայն պարտապանին, այլ վոչ ամբողջ ծիփն պատկանում էն անձամբ կողնտեսականին, այլ վոչ ամբողջ ծիփն պատկանում էն անձամբ կազմությունների:

Պահից, թե այդ գույքը ձեռք է բերված ծիփ առանձին անդամի անձնական միջոցներով կամ ամբողջ ծիփ միջոցներով: Յեթե վերդրման ժամանակ անհնար է վորոշել ծիփ առանձին անդամ պարտապանի անձնական գույքը, վերջբար ցուցակն է մտցվում ծիփ ամբողջ գույքը (բռնագանձման յենթակա գումարը չգերազանցող սահմաններում), իսկ ծիփ ներկայացուցչին դատական կատարածուն բացարձում է, վոր նա իրավունք ունի դիմելու ժողովրդական դատարանը և ինդրելու գույքից մասնատել պարտապանին հասնող մասը և վերջբարից գուրս հանել ծիփ մնացած անդամների ընդհանուր սեփականություն կազմով գույքը:

Նույն կանոնները կիրառվում են և այն դեպքերում, յերբ բռնագանձումը գործադրվում է կոլտնտեսային ծիփ գույքի վրա, բայց այն առանձնահատկությամբ, վոր կոլխոզային ծիփ ընդհանուր գույքը կազմում է նրա տնամերձ հողամասի ոժանդակ տնտեսությունը, իսկ այն յեկամուտները, վոր ստանում է կոլտնտեսականը հանրայնացված սեկտորի տնտեսությունից՝ կոլտնտեսությունում նրա աշխարհը դրամական ու բնական հատուցումը— պատկանում էն անձամբ կողնտեսականին, այլ վոչ ծիփին, և նրա անձնական սեփականությունն են կազմում:

Սակայն վորոշ գեղեցիրում ծիփ առանձին անդամի պարտքը կարող է մարվել վոչ միայն ծիփ անդամի անձնական գույքի, այլև ամբողջ ծիփ գույքի հաշվից: Այսպես՝ ՌԽՖՍՀ ԺԿԽ 1934 թվի նոյեմբերի 3-ի վորոշման համաձայն («ՌԽՖՍՀ Որ. Ժող.» 1934 թ. № 39, հոդ. 243) պետական հիմնարկությունների և ժեռնարկությունների, կոլտնտեսությունների, կոռպարտեալ և հասարակական կազմակերպությունների գույքի հավատակումներից, վատնումներից ու յուրացումներից առաջացած վնասների, բռնագանձումների դեպքերում՝ բռնագանձում կարող է կիրառվել և այն գույքի վրա, վորին դատապարտվածը այլ անձանց հետ միատեղ է տիրապետում, նույն թվում՝ կոլտնտեսային ու դյուլացիական ծիփ ընդհանուր գույքի վրա, այն ծիփ, վորի կազմին է պատկանում դատապարտվածը, նմանապես ամուսինների ընդհանուր գույքի վրա: ՌԽՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1929 թ. հունիսի 28-ի պարզաբանման համաձայն, ամբողջ ծիփ կամ ընտանիքի պատասխանատվության այդ կարգը կիրառվում է վոչ միայն վատնման կամ գողության մեղադրման

գեպքերում, այլև այն բոլոր դեպքերում, յերբ պարտապահը հանցագործ ճանապարհով իր ողափին և դարձրել վորեկ պետական հասարակական գույքը, որինակ՝ Քր. Որ. 109, 169 շասով\*) և այլ հոգվածներով դատապարտելու դեպքում:

Սակայն որենքն այդ կանոնի ներդործությունը սահմանափակում է յերկու պարմանների առկայությամբ։ առաջին՝ յեթե դատարանով հաստատվի, վոր ծխի կամ ընտանիքի ընդհանուր գույքը հանցագործության հետևանքով ավելացել է, և, յերկուրորդ, յեթե վատնման, յուրացման ու հափշտակման հանցագործություններ կատարելու մոմենտից մինչև քրեական հետապնդում մկնելու մոմենտն անցել է յերկու տարուց վոչ ավելի։

### ՎԵՐԳՐՎԱԾ ԳՈՒՅՑԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Գույքի վերգիրն ավարտելուց հետո դատական կատարածուն պետք է միջոցներ ձեռք առնի վերգրված գույքը պահպանելու համար։ Այդ միջոցները կայանում են նրանում, վոր դատական կատարածուն պարտապահին հայտարարում է այն մասին, վոր նրան արգելում է տնօրինել վերգրված գույքը և գույքի պահորդ և նշանակում, այսինքն՝ մի անձ, վորը պարտավոր և պահպանել այդ գույքն անվճառ վիճակում մինչև նրա իրացնելը (ռեալիզացիա), վատնման քրեական պատասխանատվության սպառնալիքի տակ։ Յեթե պարտապահը ներկա յէ գտնվում և համաձայն է պահորդի պատասխանատվություն վերցնել իր վրա, վերգրված գույքը նրան է հանձնվում ի պահպանումն։ Յեթե պարտապահը հրաժարվում է գույքի պահպանումն իր վրա վերցնել, յեթե նա բացակայում է, կամ դատական կատարածուն կնախատեսի այնպիսի հանգամանքներ, վորոնք արգելակում են գույքը պարտապահին հանձնել ի պահպանումն, այդ դեպքերում դատական կատարածուն պահորդ նշանակում է մի կողմնակի անձ, որինակ՝ տնային կառավարչին, բնակարանի հարեւանին և այլն։ Յերբ վերգրվում են պարտապահին պատկանյալ վայրություն արժեքներ— պետիոնառության որիլիզացիաներ, վոսկի, արծաթ, պլատին և պլատինի դրամներ, կերտվածքներ, ջարդվածք (բոմ) ու ձույլ, թանդարժեք քարեր, ոտարերկրային վայրությունների պահպանումը։

\*) 135, 200 2 մ. Հոդ., Հոդ. Քր. Որենսգրքի։

կամ նրա կարգով դուրս գրված վճարման փաստաթղթեր (մուրհակներ, չեկեր, փոխադրումներ և այլն) և ոտարերկրյա ֆոնդային արժեքներ (ակցիաներ, որիլիզացիաներ, կուպոններ և այլն), նման բոլոր արժեքները, վերգրի ցուցակում գրանցելուց հետո, դատական կատարածուն պարտավոր և վերցնել պարտապահից և վերցնելու որն այդ հանձնել արձանագրությամբ Պետրոսիկի տեղական բաժանմունքը ի պահպանումն, դրանից հետո տարով պարտապահին գույքը բանկը հանձնելու արձանագրության պատճենը։

Գույքի պահորդը, յեթե վերցնս հանգիսանում է ինքը պարտապահնը կամ նրա ընտանիքի անդամները, գույքի պահպանման համար վարձատրություն պահանջնելու իրավունք չունի։ Բայց յեթե գույքի պահորդ և նշանակված մի կողմնակի անձ, վերցնս վարձատրություն և ստանում պահպանման համար՝ սահմանված ՌԽՖՍՀ Արժեղողկոմատի կողմից հաստատված սակագնի չափով (գույքը 50 ոուրլուց վոչ ավելի զնահատելու դեպքում— պահպանման գումարի 5% չափով, 50—250 ո.— 3%, 250 ոուրլուց բարձր— 1½%)։ Բայց այդ վարձատրությունից, պահորդն իրավունք ունի ստանալու պահպանման համար իր կողմից փաստութեան կատարած ծախսերի փոխհատուցումը, որինակ՝ պահպանների վարձում, պահպանման համար շենքերի վարձում, անասունների ինք, գույքի տեղափոխում և այլն։ Պահորդին հասանելիք գումարները մուծում և դատական կատարածվին պարտատերը, իսկ հետո այդ գումարները, վորպես կտարման հետ կապված ծախսերը, պետք է դանձվեն պարտապահից։

Յերբ վերգրված գույքի պահորդ է նշանակվում պետական, կոռպերատիվ և հասարակական հիմնարկության կամ կազմակերպության վորթեւ պաշտոնական անձ (պարետ, տնտեսվար, տնային կառավարիչ և այլն), վորն ի պաշտոնէ պատասխանատու յէ նրա տնօրինությանը հանձնված գույքի պահպանման համար, գույքի պահպանման համար նրան վարձատրություն չի տրվում, այլ կարող են փոխհատուցվել միայն գույքի պահպանման հետ կապված անհրաժեշտ փաստացի ծախսերը (ՌԽՖՍՀ Գերադույն դատարանի նախադահության 1935 թ. ոգոստոսի 13—14 պարզաբնությունը)։

Վերգրված գույքը պահպանման համար վերցնող անձերը պա-

տասխանատու յեն գույքի ամբողջության ու անվնասության համար, հակառակ դեպքում՝ բացի վնասների դիմաց քաղաքացիական պատասխանատվություն կրելուց՝ նրանց սպառնում և մեղադրանք ըստ Քր. Որ. 116 Հոդ.):

### ԳՈՒՅՔԻ ՎԵՐԴՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Վերդիր կազմելուն վերաբերյալ դատական կատարածվի բոլոր գործողությունները շարադրված պետք է լինեն հատուկ արձանագրության մեջ, վորը գույքի վերդիր և անվանվում: Վերդրում նշված պետք է լինի:

- ա) վերդիր կատարող անձի անվանումը.
- բ) արձանագրություն կազմելու ժամանակն ու աեղը.
- տ) կալանք դնելու հիմքը.
- դ) պարտատիրոջ ու պարտապահի անվանումը.
- ե) յուրաքանչյուր կալանքի յենթարկված առարկայի անունն ու նկարագրումը.
- զ) նշումներ հիշյալ առարկաների առանձնահատկությունների կամ հազվագյուտ լինելու մասին.
- ի) յուրաքանչյուր առարկայի գնահատումը.
- ը) պահորդի անվանումը, պահանձման պարտավորությունների բացատրումը և պահորդի ստորագրությունը.
- թ) կողմերի ու վերդրին ներկա յեղող անձերի դիտողությունները և դատական կատարածվի կարգադրությունները այդ դիտողությունների նկատմամբ.
- ժ) բոլոր ներկա յեղողների ստորագրությունները:

Գույքի վերդիր արձանագրությունը շատ կարենոր փաստաթուղթ է հանդիսանում: Այդ վոչ միայն վերդրված գույքի թը-ժարկումն է, այլ և արձանագրություն, վորն իր մեջ պետք է արտացոլի դատական կատարածվի ու գործով շահագրգռված անձերի պարտապահի, պարտատիրոջ և գույքի նկատմամբ պահանջ ներկայացնող յերրորդ անձերի գործողությունները: Այդ պատճառով այդ անձերի յուրաքանչյուր ելական նշանակություն ունեցող հայտարարություն, առարկություններ ու վեճեր՝ վերդիր ու դատական կատարածվի կարգադրությունների

\*) 142 Հոդ. Քր. Որ.:

առթիվ՝ իրենց արտացոլումը պետք է գտնեն վերդրի արձանագրության մեջ: Վերդրի արձանագրության պատճենը պետք է հանձնվի պարտապահին, իսկ յեթե գործով գույքի պահորդ և նշանակվում (կողմնակի անձ), նրան ևս պետք է հանձնվի արձանագրության պատճենը: Գույքը պահպանման համար ստանալու մասին պահորդն ստորագրում է վերդրի իսկական արձանագրության տակ:

### ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Գույքի վրա կալանք դնելու և նրա վերդրման վերջնական նպատակը պետք է լինի՝ վերդրված գույքը վաճառել և վաճառքոց գոյացած դրամը հանձնել պարտատերին: Դատական կատարածվի կողմից գույքը վաճառելու յերկու կարգ և որենքով նախահետված: (Քաղ. Դ. Ո. 300 Հոդ.):\*) առաջին՝ պետական, կոռուկերատիվ և հասարակական ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջոցով, հիշյալ ձեռնարկություններին ու կազմակերպություններին վերդրված գույքը վերդրում նշանակված գներով հանձնելու կամ կոմիսիոն սկզբունքներով վաճառելու կարգով, և յերկրորդ՝ ըրապակական աճուրդի կարգով: Այսպես՝ գերիցիային ապրանքները, վորոնք նշված են ՌԽՖՍՀ ներքին առևտրի ժողկոմատի կողմից հաստատված ցուցակներում, հանձնվում են պետական առևտրական կազմակերպություններին կամ կոռպերատիվ կազմակերպություններին՝ առևտրի տեղական մարմինների ցուցումներով, այն գներով, վոր սահմանված են առևտրի նույն մարմինների կողմից:

Պարտապահի վերդրված անասունները հանձնվում են պետական մթերումների գներով. ա) բանող ձիերը՝ կոլտնտեսություններին, բ) ցեղային անասուններն ու կաթնատու կոլերը՝ կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին կամ խորհանտեսություններին՝ այդ խորհանտեսությունների գիրեկառների հետ համաձայնության գալու կարգով, և գ) մասցու անասունները՝ Զաղոսսկոտին (ՍՏՌ 1934 թ. նոյեմբերի 17-ի լորոշում): Վորկին, պլատինը, արծաթը և այլ արժեքները, վոր նշված են Քաղ.

\*) 300 Հոդ. Քաղ. Դատ. Որ.:

Դ. Որ. 300 Հոդ.\*\*) «զ» կետում (աես վերևու՝ «Վերդրված գույքի պահպանումը» բաժինը), նմանապես պետքոխառությունների որբեգացիաները հանձնվում են Պետրանիկին կամ պետական ձեռնարկություններին՝ ԽՍՀՄ Ֆինժողկումատի ցուցումներով։ Թանգարանային կամ գիտական նշանակություն ունեցող հինավորց, արվեստին վերաբերող առարկաները հանձնվում են Համապատասխան թանգարանային կամ գիտական հիմնարկությունների անորինությանը՝ վերգրում նշանակված գներով։ Գյուղատնեսական կուլտուրաների սերմերը հանձնվում են կոլտնտեսություններին՝ պետական մթերումների գներով։

Վերգրված գույքի մնացած իրերը կարող են վաճառվել Հրապարակային աճուրդով։ Սակայն և այս դեպքերում գատական կատարածուն նկատի պետք է ունենա ՌԽՍՀ Գերազույն գատարանի նախագահության 1930 թվի փետրվարի 28-ի ցուցումն այն մասին, վոր «Հրապարակային աճուրդի մեթոդը ոկրունքորեն հակասում է մեր ամբողջ գիրքորչմանը», վորովհետև մենք չենք չենք իրախուսում ազատ կոնկորդինցիան, և այդ մեթոդը գործնականում տանում է գեղի սպեկուլյացիան և զանազան չարարկությունները... Այդ պատճառով այդ կարգը (վաճառումը պետական, կոռուպերատիվ կամ հասարակական կառակերպությունների միջոցով) անհրաժեշտ է տարածել և այն բոլոր գեղաքերի վրա, յերբ տնտեսական տեսակետից նպատակահարմար իրացման համար վերգրված գույքը կարող է հանձնվել տեղական պետական կամ կոռուպերատիվ կազմակերպություններին...»

Դրա համար, նախքան հրապարակային աճուրդին դիմելը, գատական կատարածուն պետք է միջոցներ ձեռք առնի գույքը վաճառելու պետական, կոռուպերատիվ կամ հասարակական ձեռնարկությունների և կազմակերպությունների միջոցով, և չրապարակային աճուրդը նշանակի միայն այն գեղքում, յերբ գույքն այդ կարգով վաճառելու միջոցառումները հաջողություն չեն ունենում կամ անհնար են։

Պետական, կոռուպերատիվ կամ հասարակական ձեռնարկությունների և կազմակերպությունների միջոցով գույքը վաճառե-

լու գեղքում դատական կատարածվի գործողությունները կայանում են նրանում, վոր նա այդ գույքը հանձնում է ձեռնարկությանը կամ կազմակերպությանը և գույքի գիմաց համապատասխան դրամական գումար է ստանում նրանցից։ Ավելի բարդ կարգով և կատարվում գույքի հրապարակային վաճառումը։ Այդտեղ որենքը գատական կատարածվից պահանջում է հետեւ մի շարք կանոնների, վորոնց չկատարելը կարող է առաջ բերել առողջ անկանոն համարելու և այն վերացնելու հնարավորությունը։ Այդ կանոնները հետեւյալն են։

1. Գույքի վաճառման ժամկետը պետք է նշանակվի այն հաշվով, վոր գույքի կալանքի ու վաճառման միջև 5 որից վոչ պահան և մեկ ամսից վոչ ավելի ժամանակամիջոց լինի, բացառությամբ շուտ փչացող առարկաների, վորոնց վաճառումը կարող է կատարվել վերգրից անմիջապես հետո։

2. Վաճառման որվա մասին պարտապանն անպայմանորեն պետք է տեղեկացված լինի, իսկ յեթե գույքը զրավ է դրած վաճառման որվա մասին իրազեկ և դառնում նաև գրավառուն։ Կառուցման իրավունքի շենքերի վաճառման որվա մասին պետք է հայտնվի կոմունալ տնտեսության տեղական մարմնին։

3. Աճուրդից վոչ պակաս քան 3 որ առաջ, յեթե գույքի դնահատումը 1000 ոռուրուց բարձր է, գատական կատարածուն պարտավոր է հայտարարել այդ մասին ընակչությանը՝ լրազրում հրապարակելու կամ հայտարարություններ վակցնելու միջոցով՝ այն մասին, վոր վաճառումը կատարվելու յեղանական կատարածվի կամերայում, ժողովրդական դատարանի շենքում, տեղական գյուղիսուրդում, կողմանակության վարչության գյուղենակում, կոռուպերատիվում և այլն։

4. Այն դեպքերում, յերբ աճուրդով վաճառվում է շենքը, գատական կատարածուն աճուրդին մասնակցելու ցանկացող անձերից պարտավոր և պահանջնել կոմունալ որգանի տեղեկանք այն մասին, վոր վոչ նրանք, վոչ նրանց ամուսինները, վոչ նրանց անչափահաս յերեխաները տվյալ վայրում չունեն շենքեր, կամ նրանց մասեր, նմանապես նրանք պետք է ստորագրություն տան, վոր վոչ նրանք վոչ եւ իրանց ընտանիքների՝ վերը նշված անդամները չունեն շենքեր կամ նրանց մասեր վորեւ այլ վայրում։

5. Յեթե գույքի մի մասի վաճառումով կոոյանա բանագանձ-

\*\*) 300—Բ Հոդ. (բ» կետ Քաղ. Դատ. Որ.)

ման յենթակա պարտքի մարման համար բավարար գումար, հետագա վաճառումը պետք է զաղարեցվի և չվաճառված գույքը՝ պետք է վերադարձվի պարտապանին:

6. Գույքի վաճառումը պետք է սկսվի գույքի վերգրի գնահատման գումարից, և գնորդ հաշվվում է նա, ով վաճառվող առարկայի համար գնահատման դիմաց ամենաբարձր գինն է առաջարկում:

7. Վաճառման վարույթի մասին՝ անպայմանորեն աճուրդի թերթ պետք է կազմվի: Վերգրված գույքի վաճառման համար նշանակվելիք ժամկետի հարցում պետք է նկատի ունենալ՝ այն առանձնահատկությունը, վոր որենքով սահմանված է վարչական կարգով նշանակված տույժերը մարելու համար գույքը հանելու (ԱՅՀ ՏՏԿ): Վորովհետև որենքով տույժը չվճարողի համար սահմանվում է 10-որյա արտոնյալ ժամկետ, սկսած դատարանի վճռից՝ այդ վճիռը հոժարակամ կատարելու համար, հետևապես այդ դեպքերում գույքի վաճառումը վճռից հետո 10 օրից չուտ չի կարող նշանակվել:

### ԶԿԱՅԱՅԱՆ ԱՃՈՒՐԴ

Այն դեպքերում, յերբ աճուրդին վոչվոք չի ներկայանում կամ յեթե ներկայացողներից վոչվոք չի բարձրացնում գնահատման գումարը, նմանապես յեթե գնորդը չի մուծում կանխավճարը կամ մնացած գումարը, աճուրդը չկայացած է հաշվվում: Զկայացած աճուրդի հետևանքները կարող են յերկու տեսակ լինել.

1. Աճուրդից հետո 3 որվա ընթացքում պարտատերը կարող է հայտնել, վոր վաճառվող գույքը վերգրի գնահատման գումարի չափով իր վրա յեթ թողնում: այդ դեպքում դատական կատարածուն գույքը հանձնում է պարտատիրողը և այդպիսով վճռի կանարումը վերջանում է:

2. Յեթե պարտատերն այդպիսի հայտարարություն չի առնում, դատական կատարածուն նշանակում է յերկրորդ աճուրդ՝ պահպանելով առաջին աճուրդի համար սահմանված կարգը, միայն այն տարբերությամբ, վոր յերկրորդ աճուրդն սկսվում է վոչ թե գնահատման, այլ ամեն մի առաջարկված գումարից:

Յեթե յերկրորդ աճուրդին ևս վոչվոք չի հանկանա մասնակցել, և պարտատերը գույքը չի թողնի իր վրա, դատական կատարածուն պարտավոր է դիմել ժողովրդական դատարան՝ ցուցում ստանալու, թե ինչ կարգով պետք է իրացնել վերգրված գույքը:

### ԱՆՎԱՎԵՐ ԱՃՈՒՐԴ

Զկայացած աճուրդից անհրաժեշտ է տարբերել անվավեր աճուրդից: Աճուրդն անվավեր ճանաչելը կարող է անդի ունենալ միայն դատական վճռի ուժով, յերբ՝ կամ շահագրգուված անձերի բողոքների կամ դատական կատարածվի գործողություններն ստուգելու կարգով՝ դատարանը կհաստատի, վոր աճուրդը կատարվել է Քաղաքացիական դատավարական որենսդրում աճուրդին վերաբերյալ նախատեսված կանոնների խախտումով, կամ պարտապանի կամ յերրորդ անձերի իրավունքների խախտումով: Վորպես որինակ այն խախտումների, վորոնք աճուրդն անվավեր ճանաչելու առիթ են ծառայում, կարելի յերել հետեւյալները՝ աճուրդի ժամկետներ նշանակելու խախտում, հրապարակման և հայտարարման բացակայությունն աճուրդի մասին, գնորդներին աճուրդին մասնակցելուց անորինական հեռացում, առաջին աճուրդին գույքի վաճառում՝ գնահատման գումարից ցած գնով, այն գույքի վաճառում, վորի վրա որենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել, վաճառում այն գույքի, վորպատկանում է յերրորդ անձանց, և վոչ պարտապանին և այլն: Դատարանի կողմից աճուրդն անվավեր ճանաչելու գեպօտմ դատական կատարածվի՝ աճուրդին վերաբերյալ բոլոր գործողությունները վերացվում են, և գույքի նոր վաճառումը պետք է կատարվի առաջին աճուրդի համար սահմանված կանոններով: Աճուրդն անվավեր ճանաչելը և նրա վերացումը կարող է անդի ունենալ վոչ միայն դատական կատարածվի կողմից թույլատված սխալների հետեւանքով, այլև այն դեպքում, յերբ վերդաս դատական ասյանը սխալ է համարում դատարանի այն վճիռը, վորի հիման վրա կատարողական գործողություններ ենին կատարվել: Դրանք կլինեն այսպես կոչված վճռի դարձման դեպքեր: Որինակ՝ վճռարեկ ատյանի կողմից գործի կարձման կամ հայցի մերժման դեպքում այն գործով, վորի վճռն արդեն է

Կատարե՛ածվել, դատարանը, վորոշում կայացնելով գույքը դատակրին վերադարձնելու մասին, պետք է կարգադրություն անի կատարումը վերացնելու և նախկին դրությունը վերականգնելու մասին, վորի համար նա պարտապանին կատարողական թերթ և առաջ բանագանձված գույքը կամ գույքի դրամական արժեքը վերջինին վերադրձնելու մասին:

Ենթերի ՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՎԵՐԴԻՐՆ ՈՒ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Այն ընդհանուր կանոնները, վոր սահմանված են գույքի վերգրման ու վաճառման համար, կիրառվում են և այն զեղքերում, յերբ բռնագանձումը կիրառվում է չենքերի ու կառուցման իրավունքի վրա: Սակայն միաժամանակ չենքերի ու կառուցման իրավունքի վերգրի ու վաճառման կարգը ունի իր առանձնահատկությունները այն տեսակետից, վոր չենքի սեփականությունը և այդ իրավունքի անցումը մի անձից մյուսին՝ պետք է բավարարի վորոշ ձեւականությունների (մասնավոր տիրապետությանը պատկանող չենքերի գրանցումը կոմունալ բաժիններում, չենքերի առ ու ծախքի պայմանագրերի նոտարական վավերացումը, մի անձի տիրապետությանը պատկանող չենքերի թվի սահմանափակումը և այլն): բացի այդ՝ նկատի ունենալով, վոր չենքերը մեծ մասմբ ավելի արժեք ունեն, քան վորեւ այլ գույք, վոր սովորաբար վերգրվում և պարտապանի մոտ, դատական կատարածվի անկանոն գործողությունների հետևանքները կարող են խոչընդունակ առիթ դառնալ թե պարտապանի ու պարտափերով և թե յերրորդ անձանց համար: Այդ պատճառով որենքը (Քաղ. Դ. Որ. 297 և 298 հոդ. հոդ.)<sup>\*)</sup> պարտագրում է դատական կատարածվին, նախ քան չենքերի ու կառուցման իրավունքի վերգրման դիմելը, այդ գույքի մասին բավարար տեղեկություններ ժողովի և առաջին հերթին այն մասին, վոր իրոք այդ գույքը պարտապանին և պատկանում: Այդ տեղեկություններն ստանալու համար դատական կատարածուն, պարտապանին ծանուցագիր ուղարկելու հետ միաժամանակ, տեղական գործկոմի

<sup>\*)</sup> 297, 298 հոդ. հոդ. Քաղ. Դ. Որ.:

կամ քաղխորհողի կոմունալ բաժնից, իսկ գյուղական վայրեւում՝ գյուղխորհուրդներից, հարցում և անում այն մասին, թե պատկանում է արդյոք պարտապանին չենքը կամ կառուցման իրավունքը, վորքան և նրա ապահովագրման կամ կահույքագրման (ինվենտարիզացիոն) գնահատումը և չկա՞ն արդյոք այդ չենքի վրա այլ բանագանձումների կալանքներ կամ արգելանքներ: Չենց նույն ժամանակ ել դատական կատարածուն պարտավոր և միջոցներ ձեռք առնել, վոր պարտապանը հնարավորություն չունենա չենքը վաճառելու, գրավ դնելու միջոցով նրա պինը դցելու և այլն:

Դրա համար դատական կատարածուն հիշյալ հարցումն կատարելու հետ միաժամանակ պահանջ են ներկայացնում կոմունալ բաժնին կալանք դնելու չենքի կամ կառուցման իրավունքի վրա՝ բանագանձման գումարի չափով:

Ենքի կամ կառուցման իրավունքի վերգիր կատարելու ժամանակ անհրաժեշտ և մանրամասնորեն նշել չենքի կամ կառուցման իրավունքի գանվելու վայրը, նշել, թե չենքը պատկանում է արդյոք պարտապանին ամբողջովին, թե վորոշ չափով միայն, թվել համատերերին, յեթե գույքը գտնվում է մի քանի անձերի ընդհանուր սեփականության իրավասության տակ, ցույց տալ պարտապանի ողտադրման տակ գտնված հողամասի տարածությունն ու տակմանները, չենքի արժեքը պահպանվագրման կամ կահույքագրման (ինվենտարիզացիոն) գնահատման համաձայն, վերգրել տան կազմի մեջ մտնող ոժանողակ չենքերը: Այդ բոլոր տեղեկությունները անհրաժեշտությունն առաջանում է նշանից, վոր հետագայում, դատական կատարածվի վերգրի հիման վրա, գույքի վաճառքից հետո ակտ պետք է կազմվի չենքերը կամ կառուցման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին:

Վորպես կանոն, չենքը կամ կառուցման իրավունքը հրապարակական աճուրդի չի գրվում: Վերգրված չենքը իրացումը (ռեալիզացիա) կատարվում է այդ չենքի հանձնումով կոմունալ տնտեսության մարմիններին վերգրի արձանագրությունում նշված պահպանվագրման կամ կահույքագրման (ինվենտարիզացիոն) գնահատման չափով: Յեթե կոմունալ բաժինը հրաժարվում է չենքն ընդունել, վերջինս նույն պայմաններով հանձնվում է պետական, կոռուպերատիվ կամ հասարակական կազմակերպություններին, և

նշանակվում ե աճուրդով վաճառվելու՝ միայն այն դեպքում, յեթե այդ կազմակերպություններն ել չեն ցանկանում գնել այդ շենքը:

Քաղ. Դ. Ո. 309—312 հոդ. հոդ.\* ) համաձայն՝ դատական կատարածուն այն անձերից, վորոնք ցանկություն են հայտնում շենքը գնել աճուրդի կարգով պետք ե պահանջի վրավ Յալօր շենքի կամ կառուցման գնահատման դումարի 10%-ի չափով, և բացի այդ՝ նրանցից պետք ե պահանջի կոմունալ բաժնից տեղեկանք այն, վոր վոչ նրանք, վոչ նրանց ամուսիններն ու անչափահան յերեխանները տվյալ վայրում չեն տիրապետում վորեւ շենքի կամ նրանց մասերի. միենույն ժամանակ նրանք պետք ե սարագրություն տան այն մասին, վոր վոչ նրանք, վոչ ել վերը հիշած նրանց ընտանիքների անդամները մի այլ վայրում շենքի կամ նրանց մասերի նույնպես չեն տիրապետում: Ինչպես շենքի ու կառուցման իրավունքի վերգրի, նույնպես և վաճառման ժամանակ դատական կատարածուն նկատի պետք ե ունենա, վոր վորքան առանձին շենքեր ել լինեն տվյալ անատիրության (ДОМОВЛАДЕНИЕ) սահմաններում, վերգրվել և վաճառվել կարող ե կամ միայն տիրությունը լրիվ չափով, ամբողջությամբ, կամ նրա իդեալական մասը, որինակ՝ ամբողջ տիրության կեսը, շենքի իրավունքի յերրորդ մասը և այլն: Վերգրել ու վաճառել շենքի առանձին մասերը, որինակ՝ յերկու սենյակ, մեկ հարկ և այլն, կամ մի տնային հողամասի վրա գտնված առանձին շենքերը՝ չի թույլատրվում, վորովհետև անատիրությունը բաժանել մասերի, յեթե մինչև անդամ՝ ըստ դատական կատարածի կարծիքի՝ հողամասի չափն ու դասավորումը թույլ են տալիս այդ անելու, այդ կարելի յեն անել միայն համապատասխան կոմունալ բաժնի թույլտվությամբ:

Հրապարակական աճուրդի միջոցով շենք կամ կառուցման իրավունք ձեռք բերող դիորդին դատական կատարածուն հանձնում է աճուրդային վաճառքի ակտի պատճենը, և այդ ակտի հիման վրա կատարվում է այդ շենքի կամ կառուցման իրավունքի դրանցումը նոր տիրապետողի անվանը:

\* ) 309—312 հոդ. հոդ. Քաղ. Դատ. Որ.:

ԲՈՒՆԱԳԱՆՉՈՒՄԸ ՊԱՐՏԱՊՄՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՐԱ  
ԿԻՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մասնավոր անձերից կատարողական վաստաթղթերով բըռնագանձում կատարելու ներկայումս ամենատարածված ձեռն է հանդիսանում պարտապահնի աշխատավարձի վրա բոնագանձում կիրառելը: Այդ կայանում է հետեւյալում— ստանալով կատարողական թերթ՝ բանլորներից կամ ծառայողներից պարտաքանին բոնագանձման մասին, դատական հատարածուն պարտապահնին ուղարկում է ծանուցագիր կատարման մասին, և միաժամանակ հիմնարկություններից, ձեռնարկություններից ու կազմակերպություններից, նմանապես և մասնավոր անձերից, վորտեղ պարտապահնը գտնվում է ծառայության մեջ, տեղեկանք և պահանջում, թե վո՞րքան ամեն տեսակի աշխատավարձ և ստանալով պարտապահնը:

Ստանալով այդ տեղեկությունները՝ դատական դատարանուն վորոշում է, թե ամսական ինչ գումարը պետք ե պահանջի պարտապահից. դրանցից հետո կատարողական վաստաթղթուղթը հանձնում է հիմնարկությանը, ձեռնարկությանը կամ կազմակերպությանը՝ առաջարկելով պարտաքանի մարելու համար պարտապահնի աշխատավարձից պահել համապատասխան գումարներ և այդ գումարները հանձնել պարտատիրոջը: Այդ առաջարկության հիմա վրա ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը պարտապահնի աշխատավարձից հանումներ ( ՎԵԿԵՏԵ ) ե կատարում և դրամը վորխաղբում է պարտատիրոջը, նշելով այն կատարողական վաստաթղթի վրա: Այդպիսով բոնագանձման այդ ձևը ինքնին շատ պարզ է և ըստ ելության կատարողական գործողություններն այստեղ կատարում է վոչ թե դատական կատարածուն, այլ այն հիմնարկության, ձեռնարկության կամ կազմակերպության հաշվապահությունը, վորտեղ աշխատում է պարտապահնը: Սակայն, չնայելով բոնագանձման այդ ձևի պարզությանը, բոնագանձման այլ ձևերից վոչ մեկը դատական կատարածվից չի պահանջում այնպիսի լարված ուշաղրություն և նրանցից վոչ մեկը գործնականում չի տալիս բոնագանձման անհանդուրժելի գործումների ( վալակիտա ) աղաղակող որինակներ, ինչպես այս ձևը: Բանն այն է, վոր պարտաքանի վորքը ի շատե խո-

շոր գումարնելի բոնադանձման գեղքերում կատարողական գործողություններն անխուսափելիորեն ընդունում են պարբերական բոնադանձման բիր բնույթ, հաճախ մի շարք տարիների տևողությամբ։ Այդ ժամանակամիջոցում պարտապանը կարող է փոխել իր աշխատանքը կամ ծառայության վայրը, իսկ վճռի կատարումից չարամտորեն խուսափող անձները դիտավորյալ կերպով ընտրում են, վորպես պարտքի վճարման խուսափելու մեջոց, աշխատանքի վայրը փոփոխելու ձեր։ Բացի այդ՝ աշխատավարձից պարբերական պահումներ անելը պահանջում է պարզութունը աշխատանքից նաև հիմնարկությունների, ձեռնարկությունների առ կազմակերպությունների այն պաշտոնական անձներից, փորոնց մոտ գտնվում է նրանց մոտ աշխատող պարտապանի գեմ ներկայացրած կատարողական փաստաթուղթը։ Մինչդեռ պրակաֆիկան ցույց է տալիս, վոր մի շարք գեղքերում այդ պաշտոնյան վճիռների կատարման գործին անպատճանատու կերպով են վերաբերվում— կատարողական փաստաթղթերը կորչում են, պահումները կատարվում են վոչ կանոնավոր կերպով, պարտապանից պահված գումարները պարտատիրոջը ժամանակին չեն ուղարկվում, պարտապանի այլ հիմնարկություն կամ ձեռնարկություն աշխատանքի անցնելու գեղքում նրա աշխատանքի նոր վայրի հասցեն չեն պարզում։ Այդ պատճառով գտառական կատարածվի վրա՝ վորպես պետական մարմնի, վորը կոչված է ապահովելու դատական վճռի արագ ու իրապես կատարելու գործը, ահագին խնդիր և դրված, առաջին՝ սիստեմատիկորեն վերահսկողություն ունենալ, վորպեսզի պարտապանի աշխատավարձից պարտափելի հասցեն չերացները կատարվեն ճշտությամբ ու կանոնավոր էլերապով և այդ պահված գումարները ժամանակին ուղարկվեն պարտատիրոջը։ յերկրորդ՝ ակտիվորեն աջակցել պարտատիրոջը— թագնվող պարտապանի հասցեն հայտարկելու համար, դիմելով մինչեւ անգամ դատախազության մարմիններին միջնորդելով, վոր քրեական պատասխանատվության կանչվեն չարամտորեն խուսափող պարտապանները։

Խորապես սիսալ և ծայրահեղորեն վնասակար է վորոշ դատական կատարածուների մեջ արմատացած այն կարծիքը, վոր յերբ կատարողական փաստաթուղթը բոնադանձման համար հանձնված է հիմնարկությանը կամ ձեռնարկությանը, դատապան կատարածուն այլիս պատասխանատվության չի բոնադանձման

ընթացքի համար, և վոր ուղարկելով կատարողական թերթը հիմնարկություն, նա կարող է իր վարույթը ավարտված հաշվել։ Ռիֆֆահ Գերազույն դատարանի հրահանգը՝ կատարողական փաստաթղթերի հաշվառման մասին՝ կատեղորիկ կերպով արգելում է ավարտված վարույթների կարգը դասել այն կատարողական վարույթները, վերոնցով կատարողական փաստաթղթերը հանձնված են հիմնարկությանը կամ ձեռնարկությանը՝ պարտապանի աշխատավարձից պահումներ կատարածուն։ Այդորինական բոնադանձմները դատական կատարածուն պետք է պահի իր մոտ առանձին հաշվառման տակ և պարբերաբար գրանց վերաբերմամբ իրացնի իր վերահսկողությունը՝ պարուքը ժամանակին բանագանձելու և դրամը պարտատիրոջն ուղարկելու նկատմամբ։ այդ նպատակի համար դատական կատարածուն անձամբ կամ ձեռնարկությունների ու հիմնարկությունների հասարակական վերահսկողության պոստերի միջոցով պարտավոր է կատարել կանոնավոր ստուգումներ, թե յերբ և վո՞րքան դրամ և պահված և յերբ են նրանք պարտատիրոջն ուղարկվել։ Այդ ստուգման բոլոր արդյունքների մասին դատական կատարածուն պետք է նշումներ անի գրանցման քարտերում։ Յեթե ստուգումով պարզվի, վոր հիմնարկությունների ու ձեռնարկությունների պաշտոնյաների չարարկման կամ անփություն հետեւանքով պահումներն աշխատավարձից ժամանակին չեն կատարվել կամ բոնադանձված գումարները չեն ուղարկվել պարտատիրոջը, դատական կատարածուն պարտավոր է արձանագրություն կազմել այդ մասին և հղել այն ժողովատարան մեղավոր պաշտոնյաներին տուղանելու՝ համաձայն Քաղ. Դ. Ո. 295 Հոդ. \*), կամ կիրառելու նրանց նկատմամբ Քաղ. Դ. Ո. 291 Հոդ. \*\*), այդ պաշտոնյաներից բոնադանձելու այն գումարները, վոր նրանց մեղքով չեն պահվել (Ռիֆֆահ Գերազույն դատարանի նախագահության 1936 թ. մայիսի 13-ի պարզաբանումը)։

Հաշվառման և հիմնարկություններին ու ձեռնարկություններին հղած՝ բանվորների ու ծառայողների աշխատավարձից պարտքը պահվելու գործը կանոնավորելու նպատակով Ռիֆֆահ Գերազույն դատարանը մշակել է մանրամասն կանոններ, վորոնշով պետք է զեկավարվել հիմնարկություններում ու ձեռնարկու-

\*) 295 Հոդ. Քաղ. Դատ. Ռ.:

\*\*) 291 Հոդ. Քաղ. Դատ. Ռ.:

Քրուններում պարտապանների աշխատավարձից պահումներ կատարելու ըրջանում: Գերագույն դատարանի 1936 թ. սեպտեմբերի 11-ի № 92 շրջաբերականի համաձայն, տեղական դատարանների նախագահներին առաջարկվեց հրավիրել հատուկ խորհրդակցություն հիմնարկությունների ու ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ համատեղ այդ կանոնների քննարկման համար և շետու այդ ձեռնարկությունների ու հիմնարկությունների հետ համաձայնության գալով՝ այդ կանոնները կիրառել կյանքում: Գերագույն դատարանի առաջարկած կարգը հետեւյալն է:

«Ձեռնարկությունների կամ հիմնարկությունների առաքման լրամինը (եկաղեգիցիան) մտնող բոլոր կատարողական թերթերը պետք են հաշվառման յենթարկվեն կատարողական թերթերի հաշվառման հատուկ մատյանում, վորտեղ նշվում են №-ն ըստ կարգի, կատարողական թերթի ստացվելու ժամանակը, կատարողական թերթը տվող դատարանի անվանումը, այդ կատարողական թերթի №-ը, պարտատիրոջ անվանումն ու հասցեն և լրուագանձման յենթակա գումարը: Յուրաքանչյուր կատարողական թերթի վրա գրվում է շտամպ կամ թե մակարդարվում է, թե ինչ №-ով և յերբ է ձեռնարկությունում կամ հիմնարկությունում կատարողական թերթն ստացվել: Պարտապանի աշխատանքի ցեղալիքը, բաժանմունքը, վարչությունը կամ մասը պարզելու համար, հաշվառման մատյանում բառորդը վերջինը, կատարողական թերթն առաքման բաժնից հանձնվում է կադրերի բաժինը (անձնական հաշվառման բաժին և այլն): Պարտապանի աշխատանքի ցեղալիքը գուցակում, բանվորների ցուցակում և այլն) նշում է անո՞ն կատարողական թերթի ստացման մասին և այն հանձնում է հաշվապահության համապատասխան հաշվարկային բաժանմունքը (հաշվարկային բաժին, աշխատավարձը վճարելու սեղան և այլն):

Յուրաքանչյուր կատարողական թերթի համար հաշվառմանում կամ հաշվարկային բաժնում կազմվում է անձնական քարտ: Այն դեպքերում, յերբ հաշվապահությունում կամ հարկային բաժնում կատարողական թերթերը կմւտակվում են մեծ քանակությամբ, անհրաժեշտ է, բացի անձնական քարտից, կազմել այլուրնենական ցուցակ այն բանվորների ու ձառնադիմում անձնական քարտի №-ի նշումով, վորոնց դեմ կատարողական թերթեր կան:

Անձնական քարտերը պահպանվում են առանձին կարգադրով (նարյագ), դրանց ստացվելու կարգի համարների համաձայն: Կատարողական թերթերը մեծ չափով կուտակվելու դեպքում անհրաժեշտ է ալիմենտային բոնագանձումների քարտերը զատել առանձին կարգադրի մեջ:

Յուրաքանչյուր կատարողական թերթ պետք է դրված ու կարգած լինի առանձին գրաշապկում: Ալիմենտային բոնագանձումների կատարողական թերթերի գրաշապեկների վրա պետք է մակարդել «ալիմենտային»: Կատարողական թերթերը պետք է պահպան անկիզելի պահարաններում կամ արժեքավոր թղթերը պահելու համար հատկացված հատուկ պահեստարանում: Կատարողական թերթերի պահելն ընդհանուր պահարաններում, աշխատակիցների սեղաններում և այլն՝ վոչ մի գեպքում թույժաբերելի չելք:

Պարտքը մարելու համար պարտապանի աշխատավարձից պահպան գումարները յերեք որվակ ընթացքում պետք է փոխանցվեն պարտատիրոջ հաշվարկային կամ ընթացիկ հաշվին, իսկ հաշվի բացակայության կամ նրա №-ն անհայտ լինելու դեպքում պետք է ուղարկվեն պարտատիրոջը՝ վերջինի ծախքով: Անմիջականորեն պարտատիրոջը դրամը կարող է հանձնվել միայն անձնագիր ներկայացնելու դեպքում:

Դրամի յուրաքանչյուր հանուրդ (յետ պահելու) կամ պարտատիրոջն ուղարկելու և հանձնելու մասին նշում է անձնական քարտում (այդորինակ մակարդարվություն կատարողական թերթի վրա կարող է արվել պարբերաբար՝ ամեն յեռամյակից կամ կիսամյակից հետո): Դրամն անձամբ ստանալու դեպքում պարտատերն այն ստանալու մասին ստորագրում է կատարողական թերթի վրա՝ նշելով անձն հալաստիացնելու համար ներկայցրած անձնագրի №-ը, ստանալու ժամանակը և վայրը:

Այն բանվորների ու ծառայողների պահանջմամբ, վորոնց աշխատավարձից կատարողական փաստաթղթերով պահումներ են կատարվել, հաշվապահությունը (հաշվարկային սեղանը, աշխատավարձ տվող սեղանը և այլն) պարտավոր է բանվորին կամ ծառայողին տեղեկանք տալ այն գումարների մասին, վոր պահպան նրանից կատարողական փաստաթղթի լիովին կամ մասնակի մարման համար:

Վարկային Հիմնարկությունների, կամ մարմինների և այլն միջոցով գրամի փոխանցումը կամ փոխադրումը հաստատող արդարացուցիչ փաստաթղթերը կարվում են կատարողական թերթին: Բռնագանձումը կատարվելուց հետո կատարողական թերթի վրա կատարման մասին մակադրվում է՝ նշելով, թե վորքան և գանձված և հանձնված պարտատիրոջը, և կատարողական թերթը կադրերի բաժնի միջոցով (անձնական հաշվառման սեղան և այլն) վերադարձվում է կատարողական թերթը ափող դատարանը: Նոտարական մարմինների կատարողական մակադրությունները, վորոնցով բռնագանձումներն ավարտված են, հանձնվում են պարտապահնին՝ բանվորին կամ ծառայողին՝ նշումով, վոր պարտքը մարզված է:

Այն գեղքում, յերբ ձեռնարկությունում, Հիմնարկությունում կամ կազմակերպությունում աշխատող պարտապահնը, աշխատունակությունը կորցնելու հետեւնքով, ժամանակավոր անշխատունակության համար նպաստ և ստանում գործարտեղկոմին կից (ֆաբզամետկոմ) վճարման կետից (в выплатной пубкт), հաշվարկային բաժինը, առանց կատարողական թերթը վճարման կետին հանձնելու պահանջ և ուղարկում, այնտեղ՝ ժամանակավոր անշխատունակության համար նշանակված նպաստից համապատասխան գումար պահելու մասին: Վճարման կետի կողմից պահած գումարները հանձնվում են հաշվարկային բաժնին՝ պարտատիրոջն ուղարկելու համար:

Այն կատարողական թերթը, վորով պահումները դադարեցվում են բանվորի կամ ծառայողի աշխատանքից աղատվելու պատճառով, կադրերի բաժնի միջոցով (անձնական հաշվառման սեղան և այլն) վերադարձվում է այն դատական մարմնին, վորը հզել և այդ թերթը ձեռնարկություն կամ Հիմնարկություն, նշելով պահած ու պարտատիրոջը հանձնված գումարների չափի մասին:

Այն գեղքերում, յերբ ձշտորեն հայտնի յե պարտապահի աշխատանքի նոր վայրը, կատարողական թերթը, վերը հիշած նշումներով, ուղարկվում է պարտապահի աշխատանքի նոր վայրի ձեռնարկությունը, Հիմնարկությունը կամ կազմակերպությունը:

Կատարողական թերթը վերադարձնելու և այլ ձեռնարկություն կամ Հիմնարկությունը հզելու մասին անպայմանորեն

պետք է տեղեկացնել թե համապատասխան դատական մարմիններին և թե պարտատերերին:

Յերբ բանվորը կամ ծառայողը, վորոնց գեմ ձեռնարկությունում կամ Հիմնարկությունում կան կատարողական թերթեր ալիմենտային գործերով, աշխատանքից հեռանալու հետեւնքով վերջնահաշվի ե ստանում, աշխատանքից աղատելու մասին տրվող աեղեկանքներում, իսկ ծառայողների նկատմամբ նաև աշխատանքային գրքույկում, անպայմանորեն մտցվում են տեղեկուտանքային թյուններ, թե ինչ կատարողական թերթով, ում ոգտին են պահանջունները, թե ինչ ժամանակված համար և վորքան պահում ալիմենտները և ինչ ժամանակված համար և վորքան պահումներ են կատարված:

Կատեղորիկ կերպով արգելվում է փոփոխության յենթարկել, կասեցնել կամ դադարեցնել բռնագանձումներն առանց դադել, կամ կասեցնել կամ դադարեցնել բռնագանձումներն առանց դադելու համար պարտավոր և աջակցել ինչպես ձեռնարկություններու կամ Հիմնարկությունների հաշվարկային բաժինների աշխատանքների կամ ծառայողին աշխատանքից աղատում են...»

Դատական կատարածուն այս կանոնները կյանքում կենսագործելու համար պարտավոր և աջակցել ինչպես ձեռնարկություններու համար կամ Հիմնարկությունների հաշվարկային բաժինների աշխատակիցներին յուցումներ ու խորհուրդներ տալու միջոցով, նույնպես և աղղանչելով Հիմնարկությունների և ձեռնարկությունների պետերին՝ հայտաբերվող թերությունների ու զանցառությունների մասին, իսկ անհրաժեշտ գեղքերում, յերբ թերությունները լուրջ նշանակություն ունեն, կամ յերբ ձեռնարկությունների ու Հիմնարկությունների աշխատակիցները նրանց վերացնելու համար միջոցներ ձեռք չեն առնում, դատական կատարածուն այդ մասին պարտավոր և տեղեկացնել ժողովրդական դատավորին՝ մեղալորներին պատասխանատվության կանչելու համար:

Յեթե պարտապահն աշխատում է կամ ծառայության մեջ եղանակում մասնակոր անձի մոտ կամ մասնավոր ձեռնարկությունում, դատական կատարածուն կատարողական թերթը չել ուղարկում, այլ ուղարկում է վարձողին՝ մասնավոր անձին կամ մասնակոր ձեռնարկությանը պարտապահնի աշխատավարձից կատարվող պահումների հաշվարկ և առաջարկում է պահումի վերաբերյալ մարդիքի գումարները հանձնել կամ փոխադրել անմիջապես պարտատիրոջը, բռնաշաղորդելով դատական կատարածվին տեղեկությունները բռնաշաղորդելով դատական կամ պահուղով գումարների մասին, կամ պահուղով գումարները մուգանձված գումարների մասին: Պարտապահնի ծել ժողովրդական դատարանի ընթացիկ հաշվին: Պարտապահնի պահուղով դատարանը կամ պահուղով գումարների մասինի ընթացիկ հաշվին:

ժամանակավոր անաշխատունակլության գեղքում զատական կատարածուն կատարողական թերթը պարտավոր և ուղարկել միության խմբելումին կից վճարման կետը՝ պահումնելը կատարելու և պարտատիրոջը այն գումարները հանձնելու համար, վորպահվել են ժամանակավոր անաշխատունակլության պատճառով՝ համաձայն Քաղ. Դ. Որ. 289 հոդ.\*\*) պարտապանին տրվող նըպաստներից: Վճարման կետից պարտապանին տրվող նպաստները դադարեցնելու գեղքում կատարողական թերթը վերագրածվում և դատական կատարածին:

Վերն արգեն նշվել է, վոր Հիմնարկություններից ու ձեռնարկություններից պարտապահնի՝ աշխատավարձի մասին ստացված տեղեկությունների հիման վրա դատական կատարածուն վորոշում է, թե աշխատավարձից ամսական ի՞նչ գումարը պետք է պահպի կատարողական փաստաթղթերում նշված պարտքը մարելու համար: Այդպիսի հաշվարկ կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր ինչպես կանոն՝ պարտապահնի աշխատավարձից կատարողական փաստաթղթերով 20%-ից ավելին չի կարող գանձվել: Այս կանոնից բացառություն և արված միայն հետեւյալ բռնագանձումների վերաբերմամբ: 1) ընտանիքի անդամների ապրուստի համար տրվող ալիմենտների: 2) աշխատանքով չարգարացված ավանսների և աշխատանքի վայրը գնալու համար հատուցված ճանապարհածախսը մարելու համար՝ պետական մարմինների, կոռպերատիվ և հասարակական ձեռնարկությունների այն բանվորներից ու ծառայողներից և նրանց կողմից վարձած արտելի այն անդամներից, վորոնք աշխատանքի չեն անցել կամ թողել են աշխատանքը մինչև ստացած ավանսը արդարացնելը, վարձակալության ժամկետից առաջ կամ պարբանագրով նախատեսված առաջադրանքը ավարտելուց առաջ: 3) պետական Հիմնարկությունների և ձեռնարկությունների, կոռպերատիվ և հասարակական կազմակերպությունների և կուտանտեսությունների գույքի հափշտակումներից, վատնումներից ու յուրացումներից առաջացած վնասների փոխհատուցման վերաբերմամբ:

Թված բռնագանձումների պահումները կարող են հասնել մինչև աշխատավարձի 50%-ը: Աշխատավարձի 50%-ից բարձր

<sup>\*)</sup> 289 ζητ. φωτ. γων. θητ.,

պահումներ չի կարելի կատարել: Հետեազես՝ ինչ գումարի ել վոր լինեն բոնադանձելու պահանջները, համենայն դեպս պարտապահին պետք է պահպանի նրա աշխատավարձի 50%-ը:

Պարտապանի աշխատավարձից բռնագանձում կատարելով՝  
վերը նշված կարգը կիրառվում է հեղինակների վերաբերմամբ  
պահումներ կատարելու գեղքում այն վարձատրությունից, վոր  
հասնում է հեղինակներին՝ նրանց պատկանող հեղինակային իրա-  
վունքի և գյուտարարության իրավունքի ոգտագործման համար,  
նմանապես՝

ա) այն գումարներից, վոր իբրև նպաստ վճարվում են սոցապետական բնակչության համար՝ Աշխ. Որ. 176 Հոդ. «բ» և «ե» կետերի համաձայն.

բ) այն գումարներից, վոր Հատուկ սահմանված կարգով՝ իրեն անհատական թոշակ՝ Հատուցվում են այն անձերին, վորոնք չանրապետության հանդեպ բացառիկ ծառայություններ ունեն.

գ) այն գումարներից, վոր վճարվում են արհեստագործական-կոռպերատիվ ընկերությունների (արտելների) անդամներին գոխաղաքարձ ողնության դրամարկղից և արհեստագործական-կոռպերատիվի գոխաղաքարձ ապահովագրման դրամարկղից՝ իբրև նախատունակությունը ժամանակավորապես կորցնելու և վաստակ (դատում) չունենալու դեպքում.

գ) սոցապի մարմինների կողմէից տրվող թօշակներից  
Տառապահ (Քառ. Դ. Որ. 289 Հոդ. 2 Ժանով.\*):

Նույն հիմունքներով կատարվում են դատարանով վորոշված ալիմենաների և պարտքի զանազան տեսակների բռնագանձում-ներն այն անձերից, վորոնք կրում են դատարանների դատավճիռ-ներով նշանակված ազատազրկման և ուղղիչ-աշխատանքային պատիժներ։ Սակայն այս գեազում՝

ա) այն անձերի վերաբերմամբ, վորոնք կրում են պատիժն տղատաղը կիման վայրերում, պահումները՝ կատարվում են բանտարկյալի աշխատավարձի այն գումարից, վոր հանում է նրան արվող սնունդի արժեքը պահպատճեց հետո (ԽՍՀՄ Գերազույն Դատարանի և Դատախազության 1936 թ. ապրիլի 13-ի պարզաբանումը). բ) ուղղիչ-աշխատանքային աշխատանքները կրող անձերի վերաբերմամբ հանումներ կատարվում են պարտապանի

<sup>\*)</sup> 289 ζηηη· 2-μη δωδηηθ· φιηη· θιηη· ηη···

աշխատավարձի այն գումարից, վոր հասնում է դատապարտվածին այն պահումներից հետո, վոր դատարանի դատավճռով կատարվում են հոգուտ ուղղեաշխատանքային հիմնարկություններին սահմանած հատկացնումների:

Վերջապես կան աշխատավորներին տրվող այնպիսի վճարումներ, վորոնցից կատարողական փաստաթղթերով պահումներ իսպառ չեն կատարվում։ Այդպիսիներն են.

1) այն գումարները, վոր հատուցվում են զինվորական ծառայողներին անձնական կամ ընտանեկան փայտի (պայեկ) բնաբերքի (натуроյ), միոխարեն ում վոր դրանք հատկացված են (որինակ՝ գերակետիկ ծառայողները, սավառնորդները և այլն), իրեղեն բավարարման կամ բնակելի տարածության և կոմունալ սպասավորումների փոխարեն.

2) Σπόλια προσωπικής αρδαλίκουτρης, φορδιφένερης, ζωγραφικής  
μεγάλης ή μεγάλης λιθογραφίας.

3) *արձակման* ( выходное ) *առթիվ հասնող նախա*

4) կենդանիների տերերին հասանելիք գումարներն այն անառունների գիմաց, վորոնք սպանվել են վարակիչ հիվանդություններ վորոշելու և վերացնելու նպատակով կամ վորոնք սատկել են սահմանված կանոնների համաձայն կատարված պատվաստման ( որի հետևանքով, նմանապես վոչնչացված առարկաների ու կերի միջոցների գիմաց տրված գումարները :

Այն գումարներից, վորոնք տրվում են ուսումնական հաստատությունների ուսանողներին վորպես թոշակ, բռնագանձում կատարել թույլատրվում ե՝ միայն թոշակառվի ընտանիքի անդամների ապրուստի հանդեպ և ուսանողական հանրակացարաններից ոգտվելուց առաջացած պարտքի հանդեպ՝ բանվորների ու ծառայողների աշխատավարձից բռնագանձումներ կատարելով վերը նշված սահմաններում:

ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՍՊԵՄԱՏԻՎ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԲԱՆԿՈՒՄ ԳՏՎՎՈՇ ԱՇԽԱՏԱՆ

ՆԵՐԻ ՈՒ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՐԱ ԲՈՎՈՎԸ ՅԱՀ

ԿԻՐԱԾԵԼԸ

Պետական, կոռպերատիվ ու Հասարակական կազմակերպություններից կատարողական փաստաթիթերով բռնագանձում կա-

տարվում և զանազան ձևերով, նայելով՝ սպազին՝ թե ի՞նչ կարդի  
հազմակերպությունից և բոնագանձում կատարվում— տնտես-  
վարկա՞յին, պետական բյուջետայի՞ն կազմակերպությունից,  
թե կոլտնտեսությունից. յԵրկրորդ՝ Հոգուտ պետակա՞ն, կոռակե-  
րատի՞վ, թե Հասարակական կազմակերպության կամ թե Հո-  
գուտ մասնակիր անձի. յԵրրորդ՝ ի՞նչ գումարի բոնագանձում և  
կատարվում— 500 ոռորդուց բա՞րձր, թե ցած:  
Տեսանկանները՝ առանձին:

Քննարկենք այդ ձևերն առանձին-առանձիւն:

Ա. ԲՈՂԱԳԻՆՉՈՒՄ ՀԱՄԱՅՆԱՑՐԱԾ ՍԵԿՏՈՐԻ ՄԻ ՏՆՏՀԱՇ-  
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՈԳՈՒՏ ՄՅՈՒՄ ԿԱԶ-  
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 500 ՌՈՒԲԼՈՒՑ ԲԱՐՁՐ ԳՈՒՄԱՐԻ

Այդ գեղեցիկում վճիռը կատարում է բանկը՝ գուրս գրելով  
պարուզի գումարը մի կազմակերպության-պարտապանի հաջից  
և փոխանցելով այն՝ մյուս կազմակերպության-պարտասիրոջ  
հաշվին։ Այդ տեսակ բռնագանձումների կատարողական փաս-  
տաթղթերը, ինչպես կանոն, գատական կատարածվին չպետք է  
հանձնվեն։ Այդ կատարողական թերթերը բռնագանձողների կող-  
մից անմիջականորեն ուղարկվում են այն վարկային հիմնարկու-  
թյունը, վորտեղ գտնվում ե պարտապան կազմակերպության  
հաշվարկային հաշիվը, և մնում են այնուեղան մինչև նրանց վերջ-  
նական մարումը։ Յեթե պարտատերն այդպիսի կատարողական  
փաստաթուղթը սիմարմամբ ուղարկում է դատական կատարած-  
վին, վերջինս պետք է այն վերադարձնի պարտատերին կամ թե  
ուղարկի այն վարկային հիմնարկությունը, վորտեղ գտնվում ե  
պարտապանի հաշվարկային հաշիվը, յեթե միայն կատարողա-  
կան փաստաթղթում նշված են վարկային հիմնարկության ան-  
վանումը և հաշվարկային հաշիվի №-ը, այդ մասին դատական  
կատարածուն հաղորդում է պարտատիրոջը։ Սակայն, վորպես  
բացառություն, դատական կատարածուն ստիպված է լինում  
յերբեմն բռնագանձում կատարել պետական, կոռպերատիվ և հա-  
սարակական կազմակերպությունների կատարողական փաս-  
տաթղթերով և 500 ոռորուց բարձր գումարների։ Բանն այն է,  
վոր որևէնքը պարտատիրոջն իրավունք է վերապահում ցանկա-  
ցած ժամանակ բանկից յետ պահանջել կատարողական փաստա-  
թուղթը և այն հանձնել դատական կատարածվին՝ կատարելու։

Պարտաւերը նույնպես իրավունք ունի հանձնարարել Բանկին՝ փաստաթուղթը դատական կատարածվին հանձնելու։ Բանկից փաստաթուղթն այդ ձեռվ յետ պահանջելու ապացույց և հանդիսանում նրա վրա բանկի կողմից արած մակագրությունը, վորը նշում է, թե յէրը և փաստաթուղթը հանձնվել բանկին, ինչ գումար և գանձել բանկը, յեթե միայն բոնագանձումներ տեղի ունեցել, փաստաթուղթը դատական կատարածվին հանձնելու ժամանակը, հաստատվում է այդ բանկի ստորագրությամբ ու կնիքով։ Այդպիսի մակագրությամբ ստացված փաստաթուղթը դատական կատարածուն պարտավոր և ընդունել առանց վորեւ առարկության (թեկուզ բոնագանձման գումարը 500 ռուբլուց բարձր լինի) և վճիռների կատարման ընդհանուր կանոններով բոնագանձում կատարել այդ փաստաթղթով։

Բ. ԲՈՒՆԱԳԱՆՁՈՒՄ ՀԱՄԱՅՆԱՅՐԱԾ ՍԵԿՏՈՐԻ ՄԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱՌՈՒՏ ՄՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ 500 ՌՈՒԲԼՈՒՑ ՑԱՆ ԳՈՒՄԱՐԻ

ԽՍՀՄ ԿԳԿ և ՃԿԾ 1935 թ. մայիսի 7-ի վորոշման համաձայն («Որ. Ժող.» № 25, 197 հոդ.) 500 ռուբլուց ցած գումարի կատարողական փաստաթղթեր բանկը բոնագանձման չի ընդունում, և այդ փաստաթղթերով կատարողական գործողություններ դատական կատարածուն պետք է կատարի՝ պարտապանի հիմնարկության դրամարկղում նրա ունեցած կանխիկ դրամի վրա կալանք դնելու և նրա այն գույքը վերդրելու միջոցով, վորի վրա որենքով թույլատրվում է բոնագանձում կիրառել։ Բայց յեթե, չնայած դատական կատարածվի կողմից ձեռք առած բուր միջոցներին, կպարզվի, վոր պարտապանը կանխիկ դրամ կամ չույք չունի, դատական հատարածուն, արձանագրություն կազմելով բոնագանձման անհաջողության մասին, պարտավոր և՝ կատարողական փաստաթուղթը արձանագրության պատճենի հետ միասեղ կամ այդ մասին կատարողական փաստաթղթի վրա յեղած մակագրությամբ՝ ուղարկել բանկ, պարտապանի կազմակության հաշվարկային հաշվից պարտքը դուրս դրելու հա-

գ. ԲՈՒՆԱԳԱՆՁՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քաղ. Դատ. Որ. 286<sup>1</sup> հոդ.<sup>\*</sup>) համաձայն պետական կամ տեղական բյուջետային հիմնարկություններից բոնագանձումներ կատարողական թերթերով կամ այլ կատարողական փաստաթղթերով, վորոնք արված են յեղել պետական, կոռուպերատիվ կամ հասարակական հիմնարկություններին, ձեռնարկություններին ու կազմակերպություններին, նմանապես աշխատավարձի բոնագանձում կատարվում են այդ հիմնարկությունների նախահաշվով բաց թողած հատկացումների (ասցրանություն) հաշվից։ Այս գեղքերում կատարողական փաստաթղթերը համահաղաքարեցվում են այն վճարման փաստաթղթերին (պլատեյնի ձօկումենտ), վորոնցով ծախսվում են նախահաշվով (սմետ) հատկացված գումարները, և ուղարկվում են ԽՍՀՄ Ֆինֆողկոմատիմիցոցով Պետական Բանկի համապատասխան հիմնարկը, միութենական կամ ավտոնոմ հանրապետության Փինֆողկոմատը կամ տեղական Փինանսական մարմինը՝ ըստ պատկանելվույն (նայելով, թե ինչ բյուջեյում է գտնվում դատակիր-հիմնարկը), ցուցում տալու համար, թե նախահաշվի բյուջետային վոր ստորաբաժանման հաշվից պետք է կատարվի բոնագանձումը կատարողական փաստաթղթով։

Այս գեղքերում կատարողական փաստաթղթերը ներկայացնում են իրենք՝ պարտատերերը, կամ նրանց խնդրանոք գատարանը՝ անմիջականորեն այն Փինանսական մարմնին, վորը Փինանսավորում է դատակիրին։

Դատական կատարածուները նման բոնագանձումների հարցում վոր մի կատարողական գործողություններ չեն ձեռնարկում։

Յեթե բյուջետային հիմնարկությունից բոնագանձում է կատարվում մասնավոր անձանց կատարողական փաստաթղթերով, այս գեղքում կատարողական փաստաթղթերը դատական կատարածվին հանձնում են պարտատերերը, սակայն այս գեղքերում ևս դատական կատարածվի դորձողությունների շրջանը շատ սահմանափակ է և հանդում է միայն այն բանին; վոր պարտագանձումը:

\*) 287-ր հոդ. Քաղ. Դատ. Որ.։

պան-Հիմնարկությանը նա ծանուցագիր է ուղարկում կատարելու մասին և ծանուցում է կազմում այն մասին, վոր այս-ինչ մարմնի կողմից այս-ինչ գործով տրված կատարողական փաստաթղթի համաձայն վորոշված է հիմնարկությունից բռնագանձել այսքան գումար, վորը յենթակա յե պարտատիրոջը հանձնելու այս-ինչ ժամկետին (ժամկետը վորոշում է դատական կատարածուն տասն որից մինչև մեկ ամսվա սահմաններում, իսկ աշխատավարձի բռնադանձման դեպքում— 5 որից մինչև 10 որվա սահմաններում, սկսած հիմնարկությունում ծանուցագիր ստանալու որից): Վոչ մի այլ կատարողական դարձողություն դատական կատարածուն չի կատարում, վորովհետև պետական կամ տեղական բյուջետային հիմնարկությանը պատկանող գույքի վրա բռնագանձում չի կարելի կիրառել (Քաղ. Դատ. Որ. 286 հոդ.\*): Նշանակված ժամկետին չվճարելու դեպքում դատական կատարածուն կատարողական փաստաթղուղթը վերադարձնում է պարտատիրոջը, վորը դրանից հետո պետք է գործի արդեն ինքը և կամ բողոք տա պարտապան-հիմնարկության դեմ նրա վերադաս հիմնարկությանը կամ թե դիմի պարտապանին Փինսանսավորող ֆինանսական որգանին՝ պարտքի գումարը պարտապան-հիմնարկության ամենամուտակա բյուջետային տարվա նախահաշվի մեջ մտցնելու ինդրանքով:

Դ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՎՈՂ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և ԺԿԽ-ի 1935 թ. մարտի 27-ի վորոշման (1935 թ. Որ. Թող. № 16, հոդ. 125), Պետրանելում կոլտնտեսությունների ընթացիկ հաջում յեղած միջոցների միակ տնօրենը կոլտնտեսության վարչությունն է, և, առանց կոլտնտեսության վարչության գիտության ու տնօրինության, կոլտնտեսությունների ընթացիկ հաջպեց վոչ մի վճարում կամ դուրս գրում լինել չի կարող: Կոլտնտեսության ընթացիկ հաջպեց հարկադրական դուրս գրում կարող է լինել միայն որենքով ուսհմանված կարգով կայացված դատական վորոշումների հիման վրա: Այսուղեց բղիսում են կոլտնտեսությունների հանդեպ կայացրած վորոշումների մի շարք հետեւյալ

<sup>\*)</sup> 286 Λητ· Φωτ· Γιαν· Πηρ·:

առանձնահատկությունները: Դատական կատարածուն կոլտնտեսություններից հարկադրական միջոցներով պարտք կարող է գանձել միայն դատական հիմնարկների կատարողական թերթերի հետայն վրա և Պետարբիտրաժի որդանների հրամանների հիման վրա: Կոլտնտեսություններից բոնագանձում է ատարելու համար գատական կատարածուներն ուրիշ վոչ մի փաստաթուղթ, որին նոտարական որդանների կատարողական մակագրություններ, չպետք է ընդունեն: Բոնագանձումը վարկային հիմնարկներում կոլտնտեսությունների ունեցած հաշվի վրա գործադրելու համար, դատարանի կատարողական թերթը, կամ Պետարբիտրաժի համարնը, անկախ բոնագանձումի գումարից, անպայման ժի հրամանը, անկախ բոնագանձումի գումարից, անպայման ված և մյուս տնտեսական որդաններից բոնագանձում անելու համար: Դատարանի կատարողական թերթը կամ Պետարբիտրաժի հրամանն ստանալուն պես դատական կատարածուն կոլտնտեսությանն առաջարկություն պետք է ուղարկի՝ պարտքը կամովին կանխիկ դրամով վճարելու, կամ կոլտնտեսությունից բանակին չկամ հրաման (բանկին) տալու միջոցով պարտքը կոլտնտեսության հաշվից դուրս գրելու մասին: Պարտքը կամովին վճարելու համար կոլտնտեսությանը 10 որից մինչև մի ամիս ժամանակ պետք է տրվի, և յերբ այս ժամկետին պարտքը չի վճարվում, այն ժամանակ միայն դատական կատարածուն կարող է կատարողական թերթը կամ Պետարբիտրաժի հրամանն ուղարկել կոլտնտեսության ընթացիկ հաշվից միջոցներ զուրս գրեթանկ՝ կոլտնտեսության ընթացիկ համար: Խոկական կատարողական թերթի կամ Պետարբիտրաժի հրամանի հետ միասին դատական կատարածուն տեղեկանք պետք է ուղարկի, թե կոլտնտեսությանն առաջարկություն է պետք և ուղարկի, թե կոլտնտեսությանն առաջարկություն է պայմանագանձումը առաջանալու ժամկետին վճարումը չի արել:

Վարովվետե ԽՍՀՄ կենտղործկոմի ու ժաղար-ը 1955 թ. մարտի 27-ի մերոհիչյալ վարոշման Հիման վրա Պետրսնկոմ կողմանակառությունների ունեցած ընթացիկ հաշիվների միջոցների վրա կալանք դնել չի թույլատրվում, հաշվից հարկադրական գույք կարելի յև անել այն միջոցների ընդհանուր գումարի 70%-ից վոչ ավելի, վոր կոլտնակառության ընթացիկ հաշվում կամ Պետրսնկա այն որպես վերջին, յերբ կատարողական թերթը կամ Պետր-

բիտրաժի հրամանը ներկայացված է բանկին։ Յեթև կոլտնտեսության հաշվում յեղած միջոցների մնացորդի 70%-ը պարտքը չի ծածկում, այս պարտքի հետագա մարումը կատարվում է կոլտնտեսության հաշվով մտնող հետազարդուր բոլոր մուծանքների միայն 70% սահմաններում, մինչև պարտքը լիովին մարելը։ Այս կարգը պահպանվում է նաև այն դեպքերում, յերբ կոլտնտեսությունից Գյուղատնտեսական բանկի ժամկետանց փոխառությունն (ըստ այս պարտքում, բայց այն պարմանով, վոր դատարանի կատարողական թերթը կամ Պետարքիտրաժի հրամանը դասական կատարածուն առաջ ուղարկում է Գյուղատնտեսական բանկ՝ պարտքը գուրս գրելու համար Գյուղատնտեսական բանկում կոլտնտեսության ունեցած անբաժանելի ֆոնդերի հաշվից։ Գյուղատնտեսական բանկում անբաժանելի ֆոնդերի հաշվում միջոցներ չլինելու գեղքում բոնադանձումը վերոհիշյալ կարգով կատարվում է Պետրանկում կոլտնտեսության ունեցած ընթացիկ հաշվից։ Գյուղատնտեսական բանկում կոլտնտեսության ունեցած հաշիվներից հարկադրական դուրս գրումը տեղի կարող է ունենալ նույնական վոչ ավելի քան հաշվում յեղած միջոցների 70%-ի չափով։

Ե. ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՂՊԵՐԱԾԻՎ ՅԵՎ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-  
ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿՈՐ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՓԱՍ-  
ՏԱԹՈՂԹԵՐՈՎ, ԱՐՎՈՐ, ԲԻՆԱԳԱՆՉՈՒՄԸ

Դետական, կոռպերատիվ և հասարակական կազմակերպությունների հաշվարկային հաշիվներից պարտք դուրս գրելու համար բանկերը մասնավոր մարդկանցից կատարողական փաստաթղթեր անմիջականորեն չեն ընդունում։ Մասնավոր անձնային պահպանձոյլ բոնադանձումը կազմակերպության հաշվարկային հաշվի վրա կիրառելու համար, պարտատերը կատարողական թերթը պետք է հանձնի դատական կատարածվին, վորը սկզբնական կատարողական գործողությունները (պարտապանին ծանուցադիր ուղարկելը և պարտքը կամովին վճարելու համար ժամկետ հանակելը) կատարելուց և այդ ժամկետն անցնելուց հետո միայն կատարողական փաստաթուղթը հանձնում է բանկ՝ կատարելու համար։

Վորովհետեւ գանձած գումարները բանկը պարտատիրոջ ձեռ-

քու չի տալիս, բոնադանձումն արվում է կազմակերպության հաշվից պարտքը դուրս գրելու և վերջինս ժողովրդական դատարանի ընթացիկ հաշիվը փոխանցելու (հաշվելու) միջոցով։ Բանկի միջոցով բոնադանձում անելու վերոհիշյալ կարգը կերպում է մասնավոր անձնաց բոլոր կատարողական փաստառապահությունը կամաց կատարողական փաստաթուղթը բանկից յետ բերելու իրավունքը վերապահվում է նաև պարտատիրոջը՝ մասնավոր մարդուն։ Աւտի և կազմակերպության հաշվարկային հաշվում միջոցներ չեն լինելու դեպքում մասնավոր մարդը կարող է դատական կատարածներու վիճակը, վոր կատարողական փաստաթուղթը բանկից յետ վիճակը, այդ փաստաթղթով բոնադանձումը կիրառի պարտապանի բերի և այդ փաստաթղթով բանադանձումը կատարելու դույքի վրա՝ համաձայն դատական վորոշումները կատարելու ընդհանուր կանոնների։

Դատական կատարածուները նկատի պետք է ունենան, վոր հիմնարկը, ձեռնարկությունը կամ կազմակերպությունը, վորից պետք է բոնադանձումն արվի, գտնվում է լուծարվելու (լիկվիդացիա) վիճակում, կատարողական գործողությունները չեն դատական, և դատական կատարածուն կատարողական փաստաթղթերն ուղարկում է համապատասխան լուծարքային համաժողովին՝ պարտատիրոջը լուծարման կարգով բավարարելու համար։ Կատարողական փաստաթուղթն այս կարգով ուղարկելու մասին պարտատերն իրազեկ պետք է լինի։

ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՅԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՄՈՏ  
ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԿԻՐԱՌԵԼԸ

Կատարողական փաստաթղթերով բոնադանձումներ կատարելիս վերդրվել կարող է վոչ միայն անմիջականորեն պարտադիրականի իրավասության տակ յեղած գույքը, որինակ՝ նրա ապրած պահարանում յեղածը, այլև պարտապանի այն գույքը, վոր այս կամ այն պատճառով յերրորդ անձնաց մոտ է գտնվում, կամ կամ անձերից պարտապանին է հասնում, որինակ՝ վարձային կանունից պարտապանին հասնող վարձավարեները և այլն։ Այս պիսի դեպքերում դատական կատարածուն նախքան այդ գույքը վերդրվելու ու կալանքի տակ գնելը պետք է համոզվի, վոր յերրորդ պահանց մոտ պարտապանն իսկապես գույքը ունի, կամ թե անձնաց

յերրորդ անձինք պարտապաննեն վորեև դրամ կամ արժեքավոր բան պետք և հանձնեն։ Այս իրադորձվում է նրանով, վոր դատական կատարածուն յերրորդ անձանց հարցում է ուղարկում, թե նրանց մոտ պարտապանից վորեև գույքը կա՞ և նրանցից պարտապանին վորեև գումար հասնո՞ւմ է։ Այսպիսի հարցում անելու հետ միասին դատական կատարածուն յերրորդ անձանց նախազդուշացնում է, վոր այդ հարցումը ստանալու բռպեցից նրանց մոտ պարտապանի ունեցած գույքի ու դրամի վրա կալանք է գրվում կատարողական փաստաթղթում նշված գումարի չափով, և վոր պարտապանին հասնող բոլոր վճարումները յերրորդ անձինք պարտավոր են հետագայում մուծել վոչ թե պարտապանին, այլ պարտատիրոջ հաշվարկային հաշիվը՝ վարկային հիմնարկները, իսկ յեթե պահանջատերն այդպիսի հաշիվը չունի կամ յեթե դատական կատարածվին հաշվարկային հաշվի համարը հայտնի չի, — ժողովը պահանջական դատարանի ոնթառին համարում

Դատավորական կատարածվի նշած ժամկետում յերրորդ անձինք  
պարտավոր են զատական կատարածվին պատասխան տալ, թե  
իրենց մոտ պարտապահնին հասնող ինչ գույքը ու դրամ կա:  
Հայտնելուց հրաժարվելու համար ժողովրդական դատարանը  
յերրորդ անձանց կարող է առողջանել մինչև 100 ռուբլի (Քաղ.  
Դատ. Որ. 295 հոդ\*): Հայտարարությունն ստանալուն պես դա-  
տական կատարածուն վերցրում, զնահատում և վաճառում ե  
հայտարերած գույքը՝ վորոշումները կատարելու ընդհանուր  
կանոններով:

Այս դեպքում, յերբ պետական, կոռագերատիվ կամ հասարակական կազմակերպությունից կամ Հիմնարկեց ըստագանձում անելիս ստիպված են լինում բանագանձումը կիրառել նույնպես պետական, կոռագերատիվ կամ հասարակական կազմակերպություն հանգիսացող յերրորդ անձից պարտապանին համոզ դրամական գումարների վրա, զատական կատարածուն իրավունք չունի յերրորդ անձից պահանջելու, վոր նա գրամը մուծի պահանջատիրոջ հաշվարկային հաշիվը կամ ժողովրդական դատարանի ընթացիկ հաշիվը։ Բանի այն ե, վոր պետական, կոռագերատիվ և հասարակական կազմակերպությունների միջև յեղած բոլոր փոխադարձ հաշվարկումները բանկի միջոցով են կատար-

<sup>\*)</sup> 295 Λητ.· Βαρ.· Γιαν.· Πηρ.·

վում՝ դրամը հաշիվներից գուրզով գրելով՝ համաձայն վարկային ռեֆորմի կանոնների։ Կանխիկ դրամով անմիջականորեն վճարում կատարելն այդպիսի կազմակերպությունների միջև տեղի ունենալ չի կարող։ Ուստի և դատական կատարածուն այսպիսի դեպքերում պետք է, նախ՝ յերրորդ անձին հարց անելիս բավականանա այն առաջարկությամբ, վոր վճարման ժամկետը հասնելուն պես պարտապանին հասանելիք դրամն իսկույն ևեթ փոխարժելի պարտապանի՝ բանկում ունեցած՝ հաշվարկային հայագրի վեց, և յերրորդ՝ այս բանի հետ միասին ծանուցում ուղարկի միվը, և յերկրորդ՝ այս բանի համապատասխան գումարի կալանք և դրվում վոր պարտապանի հաշվի վրա այս-ինչ գումարի կալանք և դրվում կարտապատճեն պահպանի մասնությունը գումարները պետք և փոխարժեն պահպանի հաշիվը մասնությունը գումարները կամ ժողովական դատարանի ընթացիկ հաշիվը։

ԵՐԱՎԻՇԽԱԾ ԴՐԱՄԸ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՅԸ ՀԱՆՉՆԵԼԸ

Դատական կատարածվի գանձած դրամական գումարների  
հաշվառումը և դատական կատարածուների կողմից դրամի  
ստացվելու և հանձնելու հաշվապահական ձեակերպման տեխնի-  
կան կրացատրվեն ստորև: Իսկ այստեղ կանգ կառնենք միայն  
պահանջատիրոջը դրամ հանձնելու հետ կապված ընդհանուր  
կանոնների վրա:

Դատական կատարածուն, վորպես կանոն՝ կանխիկ՝ դրամ չպետք է ընդունի: Նա պահանջատիրողը կամ յերրորդ անձին պետք է նախազգուշացնի, վոր իրենցից հասանելիք դրամը մուծվի վարկային հիմնարկներում պահանջատիրող ունեցած հաշվարկային հաշիվը, իսկ յեթե այն հայտնի չե կամ չկա՝ ժողովովարական դատարանի ընթացիկ հաշիվը: Համաձայն հՍՀՄ դովդուրական դատարանի ցուցումի (1936 թ. մայիսի 22-ի № 28 գերազույն դատարանի

չընաբերական համակը), դատական կատարածվին թույլ ե տրվում միայն այն դեպքում կանխիկ դրամ ընդունել, յերբ Քաղ. Դ. Ո. Ն ե այդ պահանջում (որինակ՝ աճուրդի ժամանակ առքի գումարը մուծելը), կամ յերբ դատական կատարածուն փողը չընդունելու դեպքում փաստն սպառնում ե այն բոլորովին չստանալուն (պարտապանը կամովին վճարելուց հարժարվելու դեպքում և այն բոնապանձումը դրամի վրա կիրառելը), կամ յերբ դատական կատարածուն ըրջան ե մեկնում:

Պարտապաններից պետական, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների ոգտին դատական կատարածվի կողմից ստացած կանխիկ դրամն ստանալու բոպեյից 24 ժամվա ընթացքում պետք ե մուծվի պահանջատիրոջ հաշվարկային հաշվով կամ փոխադրվի ժողովրդական դատարանի դեպողիաի հաշիվը: Մասնավոր անձնոց ոգտին դանձած դրամը 24 ժամվա ընթացքում պետք ե հանձնվի պահանջատիրոջը կամ նույն ժամկետում հանձնվի փոստին՝ պահանջատիրոջը փոխադրելու համար: Դրամն այս ձևով հանձնելը հասարակոր չլինելու դեպքում պետք ե մուծվի ժողովրդական դատարանի ընթացիկ հաշիվը:

### ԲԻՆԱԳԱՆՁԱԾ ԴՐԱՄԸ ՊԱՀԱՆՁԱՏԵՐԵԲԻ ՎՐԱ ԲԱԺԱՆԵԼԸ

Յեթե դրամը մի պահանջատիրոջ ոգտին ե բոնագանձած կամ յեթե պահանջատերելը միքանի հոգի յեն, ու բոնագանձած գումարը բավական ե ամբողջ պարտքը վճարելու համար, պահանջատերելին դրամ հանձնելը դատական կատարածվի համար զորեւ դժվարություն չի ներկայացնում: Այլ բան ե, յեթե մի քանի պահանջատերելի ոգտին բոնագանձած գումարը բավական չե բոլորին լիովին բավարարելու համար: Այն ժամանակ այդ դրամը պահանջատերելի վրա բաժանելու կարիք ե առաջ գալիս: Այս բաժանումը հետեւյալ կերպ է կատարվում: Բաժանելուն մասնակցելու համար բոլոր պահանջանքները չորս հերթի յեն բաժանվում: Առաջին հերթին պետք ե դասվին. ա) աշխատավարձի և այլ պահանջների բոնագանձումը, վրոնք աշխատանքի որենսգրքից են բղխում. բ) ալիքնենտի և հաշմության ու մահվան թոշակի (հատուցում) բոնագանձումը. գ) սոցիալական ապահովագրման պարտքի բոնագանձումը և դ) Փարզութեական մասնակցելու պահար արվող արհմիութեական մասնումնե-

րի բոնագանձումը. յերկրորդ հերթին դասվում են. հարկերի ու սուրբքերի ապառիկների բոնագանձումը, ինչպես և Պետրանկի պահանջով արվող ու նրա վարկային գործառնություններից պահանջով արվող ու նրա վարկային գործառնությունների, կան, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների ոգտին արշակությունները. չորրորդ հերթին դասվում են մյուս բոնագանձումները: Գումարների բաժանումն սկզբից կաւարգում և առաջին հերթի պահանջատերերի վրա: Յեթե նրանց պարագում և առաջին հերթի պահանջատերերի ոգտին առաջին համարելուց հետո դատական կատարածվի մոտ դարձյալ դրամ և վճարելուց համար դատական կատարածվի մուտքածումը, այն դեպքում յերկրորդ հերթի պահանջանքներն են համում, այլ դեպքում յերկրորդ հերթի պահանջանքներն են համում:

Յեթե առաջնահերթ բոնագանձումները վճարելուց հետո գանձած դրամ չի մնում, այն ժամանակ յերկրորդ և հետագա հերթերի պահանջատերերը բաժանումից վոչինչ չեն ստանում և նրանց պահանջանքները մնում են առանց հատուցելու:

Բայց կարող է այնպես ել պատահել, վոր նույնիսկ առաջնահերթ պահանջանքները հատուցելու համար դրամը չբավականացնի: Այսպիսի դեպքերում դատական կատարածուն հաշվում ե նի: Այսպիսի դեպքերում պահական կատարածվի համարը (ըսրուր առաջնահերթ պահանջանքների ընդհանուր գումարը (ըսրուր առաջնահերթ պահանջանքների ընդհանուր գումարը գումարը, դումներից գոյացած գումարը, դուրս գալով բոնագանձածումներից գոյացած ծախսերը (ստացվում ե, յենթաղբենք, 500 ոուր.) և այս վերջին գումարը բաժանում և առաջինի վրա. 500 ոուր.) և այս վերջին գումարը բաժանում և առաջինի կոպեկ այսպիսով վորոշվում ե, թե բոնագանձած գումարից քանի կոպեկ ե գալիս պահանջանքի յուրաքանչյուր ոուրլուն (մեր որնակից՝ յուրաքանչյուր պարտատիրական ոուրլուն 50 կոպ.): Այսպիսով յուրամի բաժանումը ըստ մեր որինակից տալիս ե այն, վոր առաջին հերթի յուրաքանչյուր պահանջատեր դատական կատարածվից հերթի յուրաքանչյուր պահանջատեր դատական կատարածվից համար այն գումարի կեսը, վոր դատարանն իր ոգտին և վորուստանա այն գումարի կեսը, վոր դատարանն իր ոգտին և վորուստանա այն գումարի կեսը:

Այն դեպքում, յերբ առաջնահերթ բոնագանձումների մեջ այլիմենտի բոնագանձումներ կան, զանձած դրամը վերոհիշյալ կոմմարզով բաժանելիս ալիմենտային դանձումների պարտքի ընդհանումների պարտքի ընդ-

Հանուր գումարը վերցվում է վրապես դրամագլխի վերածված գումար՝ վճարումների յեռամյա բռնագանձումների գումարի հայպի:

Գանձած դրամները պահանջատերենի վրա բաժանելու համար դատական կատարածվի կազմած հաշիվը պետք է առաջարկվի պահանջատերերին ու պարտապանին, և յեթե յերեք որվա ընթացքում այդ հաշվի գեմ հիշյալ մարդկանցից առարկություններ չլինեն, դատական կատարածուն պահանջատերերին հանձնում ե հաշվի համաձայն հասնող դրամը: Իսկ յեթե այդպիսիք մէ առարկություն ստացվի, դատական կատարածուն հաշիվը պետք է ներկայացնի ժողովրդական դատավորին ի հաստատություն:

ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ալիմենտային գործերին վերաբերող վորոշումները կատարվում են կամ բռնագանձումը պարտապահնի աշխատավարձի վրա կիրառելու միջոցով, կամ բռնագանձումը նրա գույքի վրա կիրառելու միջոցով։ Թե մեկ և թե մյուս դեպքում կատարումը տեղի յէ ունենում համաձայն կատարման այն ընդհանուր կանոնների, վորոնք սահմանված են բռնագանձումների այս տեսակներից յուրաքանչյուրի համար (տես 22—57 եղ)։ Ուստի այստեղ կանգ կառնենք միայն այն առանձնահատկությունների վրա, զոր դատական կատարածուն նկատի պետք է ունենա ալիմենտային գործերին վերաբերող վորոշումներ կատարելիս։ Ալիմենտային գործերին վերաբերող՝ գատարանների վորոշումների կատարումը դատական կատարածվի աշխատանքի ամենապատասխանատու բռնագավառներից մեկն է։ 1936 թ. հունիսի 27-ի որենքը «Վիժեցումներն (աբօրտ) արգելելու, ծննդկանների նյութական ոգնությունն ավելացնելու, բարգանդամ ընտանիքներին պետական ոգնություն սահմանելու, ծննդատանների, մանկամսութների ու մանկապարտեկների ցանցն ընդարձակելու, ալիմենտ չվճարելու համար քրեական պատասխանատվությունն ուժեղացնելու և ապահարզանի վերաբերմամբ որենազրության մեջ վորոշ փոփոխություններ մտցնելու մասին» գատական կատարածուների վրա ել հսկայական քաղաքական կարեորություն ունեցող խոնդիր ե

դնում՝ որենքը կյանքում կիրառելու նկատմամբ. դատական կատարածվից պահանջվում է արագ, ճշտապահորեն ու ուել կերպով բռնադանձել յերեխաների ազրուստի համար դատարակերպով վորոշված ալիմենտները:

Վորպեսզի մայրն ու յերեխան կարողանան չուտ և առաջ վորպեսզի ստանալ 1936 թ. հունիսի 27-ի որեւէքի Համաձայն քաշքուկի սովորությունը պատահան կատարածութիւնուց ողբան վորպշած ալիմենուները, դատական կատարածութիւնուց ողբան վորպշած ալիմենուները կատարելիս առավելագույն սերը պարտավոր են վորպշումները կատարելիս առավելագույն ակտիվություն ու նախաձեռնություն յերեխան բերել վոչ միայն ակտիվություն, յերբ ալիմենաը դատական կատարածուներն են այն գեղքերում, յերբ ալիմենաը դատական բոնագանձում, այլև՝ այն գեղքերում, յերբ անմիջականորեն բոնագանձում, այլև՝ այն գեղքերում, յերբ հիմնարկները, ձեռնարկություններն ու կազմակերպություններն հիմնարկները, ձեռնարկություններն ու կազմակերպություններն են կատարում՝ ալիմենաը դատակը աշխատավարձից պահելու միջոցով։ Ուստի և ալիմենան բոնագանձելու կատարողական գործողությունները դատական կատարածուն պետք ե սկսի կատարողական թերթին ստանալուն պես անհապաղ, և վոչ ուշ քան հարուստ որը դատական կատարածուն պահումներ անելու համար, ջորդ որը դատական կատարածուն պահումներ անելու համար, կատարողական թերթը պետք ե ուղարկի այն հիմնարկը կամ կատարողական թերթը պետք ե ուղարկի այն հիմնարկը :

Դաստիարակության կատարածուն պարտավոր ե գիտենալ ու իր սոս  
հաշվառման մեջ պահել ալիմենտային դորձերին վերաբերող  
բոլոր այն բնագանձումները, վոր Հիմնարկներն ու ձեռնարկու-  
թյուններն են անում, և նրանց նկատմամբ սիստեմատիկ կրնարու-  
սահմանել կատարողական թերթերը պահելու, աշխատավարձից  
միշտ հանումներն անելու և պահանջատիրուհիներին դրամը ժա-  
մանակին տալու վրա:

Հիմնարկների ու ձեռնարկությունների այսպիսի ստուգումը  
պետք է կատարի թե ինքը՝ դատական կատարածուն, և թե  
նրա հասարակական ակտիվը՝ վազորոք մշակված պլանով ու այն  
հաշվով, վոր վորոշ ժամանակամիջոցում— յեռամսյակում կամ  
կիսամյակում, նայած տեղական պայմաններին, ստուգումն  
ընդունելի բարոր չափ քիչ խոչը հիմնարկները, ձեռնարկու-  
թյուններն ու կազմակերպությունները, վորոնք գտնվում են  
դատական կատարածվի շրջանում:

Ստուգման ուղարկվող հասարակական ակտորներ դատական էամբարածուն նախորոք հրահանգ պետք է տա, թե ստուգման ժամանակի ինչ բանի վրա պետք է ուշադրություն դարձվի։ Այս-

ալիսի մոմենտների որինակելի ցանկը տրված է ԱԽՖՍՀ գերազույն դատարանի 1936թ. սեպտեմբերի 11-ի №92, վեր հիշված՝ շտեռ էջ 52) ըրջարերականում՝ «Բանվորների ու ծառայողների աշխատավարձից պահելու համար ձեռնարկություններ ու հիմնարկներ ուղարկված կատարողական փաստաթղթերով հաշվառում ու գանձում կատարելու գործի գրվածքի մասին»:

Այդ ըրջարերականի մեջ նշված հարցերին դուգընթաց, ալիմենտ բնագանձելու աշխատանքի ստուգման ժամանակ լուրջ ուշդրություն պետք է գարձի այն հարցին, թե պարտապանից պահվող գումարը համապատասխանում է արդյոք ալիմենտի այն չափին, վոր դատարանն է վորոշել: 1937թ. Մոսկվայի մարզի ձեռնարկություններից մի քանիսում կատարվող հասարակական ստուգումը ցույց է տվել, վոր պարտապաններից փաստորեն ալելի քիչ է պահվում, քան որենքով պետք է արդեր: Որինակ՝ Լյուբերցիկի գործարանում ալիմենտային պահումների չափը կազմում եր պարտապանի աշխատավարձի վոչ թե 25%-ը, այլ 2—12%-ը միայն, վագոնի գործարանում դատակիրների 88%-ը փաստորեն ալիմենտ վճարել եր իր մշտական աշխատավարձի 25%-ից պակաս: Որենքի այսպիսի խեղաթյուրումները, վոր ամենակոպիտ կերպով խախտում են մոր և յերեխայի իրավունքները, ուղղակի արդյունք են հանդիսանում այն բանի, վոր դատական մարմինները թերապնահատում են ձեռնարկություններում ու հիմնարկներում կատարվող պահումների կանոնավորությունը: Որենքի այսպիսի խեղաթյուրումների տեղիք չտալու համար, դատական կատարածուներն իրենք պետք է յուրացնեն ու ձեռնարկությունների և հիմնարկների հաշվարկման սեղանի աշխատողներին բացատրեն, թե պարտապանի վարձատրության ու աշխատավարձի վոչ տեսակներից պետք է պահումներ կատարվեն ալիմենտ վճարելու համար:

Էնդ վորում հաստատուն կերպով պետք է դեկավարվել ԽՍՀՄ Արդյողկոմատի 1936թ. № 3 ըրջարերականով, վորի համաձայն աշխատավարձից տնկոսային մասնանումներ բոնագանձելիս յերեքտ պետք է ունենալ վոչ միայն աշխատակիրների ամսական կայուն դրույքը, այլև աշխատանքի պայմանագրով բրովով վարձատրության բոլոր տեսակները, վորոնք մշտական բնույթ են կրում (գործարձ, արտաժամյա, համատեղության

հաստոցում և այլն). չեն մտնում միայն պատահական ստացումները՝ պարզեները, նպաստները և այլն:

Այն գեղքում, յերբ ալիմենտային գործով դատակիր (պատասխանորդ) հանդիսանում է այնպիսի մարդ, վոր ամսական աշխատավարձ չի ստանում (գրող, նկարիչ և այլն), ալիմենտի աշխատավարձ սի ստանում գրող, նկարիչ մեկ տասներկուերորդականի չափով, վորով, իբրև յեկամտահարել, հարկվում է պականի չափով, վորով, իբրև յեկամտահարել, հարկվում է պականի չափով, վորով, ալիմենտի տարեկան յեկամուտը, կամ դատարանով սահմանված տարեկան յեկամուտը:

Այն անձանց նկատմամբ, վորոնք ամսական աշխատավարձ չեն ստանում և իրենց անտեսության կամ արհեստի յեկամուտով են ապրում (մենատնտես գյուղացի, տնայնագործ և այլն), ինչպես և այն անձանց նկատմամբ, վորոնք փոփոխակի վաստակ ունեն, նկատի պետք է առնվեն դատակիր վերջին տարվա բոլոր յեկամուտները, և ալիմենտի չափը պետք է սահմանվի կայուն գումարով, որենքում նշված նորմաների համեմատ՝ պատասխանորդի տարեկան ընդհանուր յեկամտի մեկ տասներկուերորդական մասի հաշվով: Այն կոլտնտեսականների նկատմամբ, վորոնք կոլտնտեսության մեջ վաստակած աշխարերին գործընթաց, վաստակ ունեն նաև տարավայր զբաղմունքից (օտխոյի պրոմածել), արհեստից և այլն, — ալիմենտը վորոշվում է թե աշխարերից տոկոսային մասհանումներ անելով, և թե լրացուցիչ յեկամուտներից՝ որենքում նշված նորմաների համեմատ, այդպիսի տարեկան յեկամուտի մեկ տասներկուերորդական մասի հաշվով:

Պրակտիկայում մեծ աններգաշնակություն են առաջացնում այն դեպքերը, յերբ մի պատասխանորդին ալիմենտի մի քանի կատարողական թերթ է առաջադրվում, վորոնց ընդհանուր գումարը յերեկմն գերազանցում է որենքով սահմանված պահումների առավելագույն չափը (լիմիտ), այսինքն՝ աշխատավարձի 50%-ը:

Որենքով մի յերեխայի ապրուստի համար գանձվում է պատասխանորդի աշխատավարձի  $\frac{1}{4}$ -ը, յերկու յերեխայի ապրուստի համար՝  $\frac{1}{3}$ -ը, յերեք և յերեքից ալելի յերեխաների համար՝ պատասխանորդի ստացած վաստակի կեսը: Կոլտնտեսականներից ալիմենտ վորոշելիս հաշիվն արվում է աշխարերով ու նույն նորմաներով: Պրակտիկայում այնպիսի դեպքեր են տեղի ունենում, վոր մի պատասխանորդին յերկու կատարողական թերթ է առաջադրվում, յերկու պահանջատեր մայրերի ալիմենտ ստանալու համար,

